2017, ՕԳՈՍՏՈՍ Բ, ԹԻՎ 16 (492)

Քրիստոնյա Հայաստան

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Օգոստոսի 21 օր ծննդյան Ամենայն Հայոց Կաթողիկոսի

Օգոստոսի 21-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի պաշտոնեությունը Ամենայն Հայոց Կաթողիկոսի ծննդյան տարեդարձի առիթով հանդիպում ունեցավ նրա հետ:

Նորին Սրբությանը պաշտոնեության անունից շնորհավորեց Մայր Աթոռի վարչատնտեսական բաժնի տնօրեն Մուշեղ եպս Բաբայանը՝ մասնավորապես նշելով, որ օրը հատկանշական է ոչ միայն Մայր Աթոռի աշխատակիցների, այլ նաեւ Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու յուրաքանչյուր հետեւորդի համար: Մուշեղ սրբազանն ընդգծեց, որ ներկաների համար պատիվ է ծառայել Մայր Աթոռում՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնության ներքո՝ իրենց գործունեության մեջ օրինակ ունենալով Նորին Սրբության անձը, նրա եռանդը, անսակարկ նվիրումն ու սերը Մայր Եկեղեցու եւ հայրենիքի հանդեպ:

Մուշեղ եպիսկոպոսը Նորին Սրբությանը մաղթեց երկար տարիների կյանք եւ անսասան, երջանիկ հովվապետություն:

Այնուհետեւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր օրհնությունը բերեց ներկաներին՝ շնորհակալություն հայտնելով ջերմ մաղթանքների համար: Նորին Սրբությունը բարձրորեն գնահատեց այն աշխատանքը, որ Մայր Աթոռի պաշտոնեությունը կատարում է ամենայն սիրով ու նվիրումով՝ ընդգծելով, որ այդ ծառայության շնորհիվ են արձանագրվում հաջողությունները եկեղեցական կյանքում, տարեցտարի պայծառանում ու շենանում է Մայր Աթոռը:

Ամենայն Հայոց Հայրապետը նշեց, որ Աստծուց կյանքի պարգեւ ստացող յուրաքանչյուր անձ ազգին, հայրենիքին ծառայելու առաքելություն ունի, որի նվիրյալ իրագործման մեջ է նա գտնում իր իրական երջանկության եւ գոհունակության ապրումը:

Գարեգին Բ Կաթողիկոսը համոզում հայտնեց, որ մեր կյանքում առկա բազում դժվարություններն ու մարտահրավերները կհաղթահարվեն, արատավոր երեւույթները կվերանան, եթե յուրաքանչյուր հայորդի իր ծառայության վայրում եւ հանգամանքում դրսեւորի նախանձախնդրություն եւ նվիրումով կատարի իր պարտքը ազգի եւ հայրենիքի հանդեպ:

Այս մտածումներով Հայոց Հայրապետը մաղթեց ներկաներին, որ Աստված Իր օրհնությունները հեղի նրանց վրա, իրենց կյանքի մեջ հավելի ուրախությունը, որպեսզի ապրեն գոհունակ սրտով եւ, անկախ իրենց հանգամանքից, բարձր գիտակցությամբ եւ պատասխանատվությամբ կատարեն իրենց աշխատանքը:

Նույն օրը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում պաշտոնավարող եպիսկոպոսները, Մայր Աթոռի ավագ եւ կրտսեր միաբաններն ու տարբեր կառույցներում սպասավորող քահանաներն այցելեցին Հայոց Հովվապետին՝ շնորհավորելու բերկրալի առիթով եւ ստանալու նրա օրհնությունը:



Ողջ հոգեւոր դասի եւ հավատացյալ ժողովրդի անունից իրենց բարեմաղթանքները բերելով Վեհափառ Հայրապետին՝ եկեղեցականները հայցեցին երկնավոր Տիրոջ զորակցությունը Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու եւ ս. Թադեոս առաքյալի Աթոռի արժանընտիր գահակալի համար՝ պարգեւելու կենաց արեւշատություն եւ արդյունազարդ հովվապետության բազում տարիներ՝ ազգօգուտ եւ եկեղեցանվեր նորանոր ծրագրերով առավել շենացնելու եւ պայծառացնելու հայոց կյանքը եւ առաքելահիմն Ս. Եկեղեցին:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը շնորհակալություն հայտնեց ամենքին ջերմ խոսքերի եւ շնորհավորանքների համար՝ հայրապետական իր օրհնությունն ու գնահատանքը բերելով ներկաներին: Վեհափառ Հայրապետն ուրախությամբ արձանագրեց, որ անցած տարիներին եկեղեցականության ջանադիր եւ միասնական ծառայության շնորհիվ է Հայոց Եկեղեցին հոգեւոր անդաստանում եւ տարբեր ասպարեզներում արձանագրել բազում հաջողություններ: Այս առիթով Նորին Սրբությունը հորդորեց հոգեւորականաց դասին առավել նախանձախնդրությամբ եւ նվիրումով շարունակել իրենց ծառայությունը Եկեղեցուն եւ հավատավոր մեր ժողովրդին:

Ամենայն Հայոց Գարեգին Բ Կաթողիկոսի ծննդյան տարեդարձի առիթով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում ստացվել են բազմաթիվ շնորհավորագրեր քույր Եկեղեցիներից, Հայ Եկեղեցու սպասավորներից, պետական, քաղաքական եւ հասարակական գործիչներից ու աշխարհասփյուռ տարբեր հայ համայնքներից:

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց զոհված զինծառայողների մայրերին

Օգոստոսի 20-ին Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում հանդիպում ունեցավ ղարաբաղյան հակամարտության ընթացքում մարտական գործողությունների եւ զինադադարի պայմաններում զոհված զինծառայողների մայրերի հետ:

Վեհափառ Հայրապետն իր օրհնությունն ու հայրական սերը փոխանցեց հանդիպմանը մասնակից մայրերին՝ բարձրորեն գնահատելով նրանց ոգին: Նորին Սրբությունն իր վշտակցությունն արտահայտեց, ապա նշեց, որ նրանց զավակներն իրենց կյանքն ընծայեցին հանուն հայրենիքի ապահով ու անվտանգ կյանքի, որպեսզի իրենց մայրերն ու քույրերն ապրեն խաղաղության մեջ, ոտնակոխ չլինեն սրբությունները, եւ երաշխավորվի մեր ժողովրդի վաղվա օրը:

Ամենայն Հայոց Հայրապետը հաստատեց, որ նահատակված զինվորների հիշատակը նվիրական է ամենքի համար, եւ նրանք իրենց սխրանքով ու հերոսական օրինակով պիտի շարունակեն հավերժ ապրել մեր ժողովրդի հոգում՝ առաջացնելով միմիայն հպարտության եւ երախտագիտության զգացում:

Գարեգին Բ Կաթողիկոսն ընդգծեց նաեւ, որ հայ զինվորը՝ հայրենյաց սահմանների պաշտպանը, մշտապես իր եւ յուրաքանչյուր հայ եկեղեցականի աղոթքներում է:

Պատասխանելով զինծառայողների մայրերին հուզող հարցերին՝ վերջում Ամենայն Հայոց Հայրապետն աղոթք բարձրացրեց առ Աստված՝ զոհված զինվորների հոգիների հանգստության համար, ապա օրհնելով որդեկորույս մայրերին՝ նրանց մաղթեց նույն հայրենասիրական ոգով, որով կրթել եւ դաստիարակել են իրենց զավակներին, շարունակել իրենց կարեւոր առաքելությունը կյանքում:

Հանդիպմանը ներկա էր Մայր Աթոռի արտաքին հարաբերությունների եւ արարողակարգի բաժնի տնօրեն Նաթան արք. Հովհաննիսյանը:

Մայր Աթոռ ժամանած մայրերը Մայր տաճարում ներկա գտնվեցին ս. Պատարագի արարողությանը:

Մայր Աթոռ Ս. Էջմիածինը հյուրընկալեց ռազմաուսումնական հաստատությունների շրջանավարտներին

Օգոստոսի 24-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածին այցելեցին Հայաստանի Հանրապետության եւ արտերկրի ռազմաուսումնական հաստատությունների 2016-2017 ուսումնական տարվա շրջանավարտները՝ ստանալու Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությունն ու պատգամը:

Մինչ արարողությունը Ամենայն Հայոց Հայրապետն ընդունեց ՀՀ պաշտպանության նախարար Վիգեն Սարգսյանին՝ ուղեկցությամբ ՀՀ ԶՈՒ հոգեւոր առաջնորդ Վրթանես եպս Աբրահամյանի:

Պաշտպանության նախարարը Նորին Սրբությանը ներկայացրեց ռազմաուսումնական հաստատությունների 2016-2017 ուս. տարվա ավարտական միջոցառումները՝ դրանց շրջանակում մեծապես կարեւորելով ապագա սպաների այցը Մայր Աթոռ: Նախարարը տեղեկացրեց նաեւ ի նպաստ բանակաշինության իրականացվող կրթական եւ սոցիալական ծրագրերի մասին:

Գարեգին Բ Կաթողիկոսը, ողջունելով նոր ձեռնարկները, իր հերթին ընդգծեց, որ այսօր ազգի ուշադրության առանցքում պիտի լինեն հայրենյաց պաշտպան հայ զինվորն ու սպան:

Հանդիպման ավարտին Ամենայն Հայոց Հայրապետը եւ պաշտպանության նախարարը հոգեւորականների թափորով առաջնորդվեցին Մայր տաճար, որտեղ կատարվեց ՀՀ եւ արտերկրի ռազմաուսումնական հաստատությունների 2016-2017 ուս. տարվա շրջանավարտների օրհնության արարողությունը:

Տերունական՝ միասնական աղոթքից հետո Ամենայն Հայոց Կաթողիկոսը հայրապետական իր պատգամը բերեց Մայր տաճարում համախմբված զինվորականներին:

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՊԱՏԳԱՄԸ ՌԱԶՄԱՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԱՌԻԹՈՎ

«Ամէն ինչի կարող եմ Նրա՛ շնորհիւ, Ով ինձ զօրացրեց»: (Փիլիպ. Դ 13)

Մեծարգո՛ Նախարար,
Պատվարժա՛ն զորականներ,
Սիրելի՛ բարեպաշտ ժողովուրդ,

Ուրախ ենք մեծապես, որ Տիրոջ կամքով առիթն ունենք Մեր շնորհավորանքն ու օրհնությունը բերելու Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի առաջնորդությամբ հայոց հոգեւոր կենտրոնում՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, համախմբված ռազմական հաստատությունների սաներին, ովքեր ուսումնական շրջափուլն ավարտելով՝ ծառայության պիտի կոչվեն Հայոց բանակում:

Գոհություն եւ փառք ենք մատուցում առ Աստված, որ այս տարի եւս մեր ռազմական կրթօջախները տվեցին հերթական առատ հունձքը: Հայոց բանակի ստեղծման 25-րդ տարեդարձի խորհրդանշական այս տարում դուք ջանադիր ու տքնաջան ուսումնառությունից հետո, ահավասիկ, պիտի համալրեք Հայոց բանակի սպայական կազմը՝ կոչվելով պատասխանատու ծառայության: Դժվարին ու մարտահրավերներով լեցուն է հայ զինվորի եւ սպայի ծառայական ուղին: Հայկ Նահապետի ու Սասունցի Դավթի ոգուց ծնունդ առնող հայ զինվորի խրոխտ պատմությունն այսօր մեկ անգամ եւս հյուսվում է ձեր՝ դեռ նոր-նոր սկսվող մարտական ուղուն: Մեր պատմության էջերում Հայոց բանակը եղել է ոչ միայն զենքի ու ռազմարվեստի, մարտական հմտության, ուժի խորհրդանիշ, այլ նաեւ՝ ոգեկերտումի ու առաքինությանց, քրիստոնեական նվիրական արժեքների եւ հերոսությանց խտացում:

Այս նվիրական օրը Մայր տաճարի սրբազան կամարների ներքո Մեր հայրական պատգամը, սիրելի՛ շրջանավարտներ, ձեզ տալիս ենք առաքյալի խոսքերով. «Ամեն ինչի կարող եմ Նրա՛ շնորհիվ, Ով ինձ զորացրեց» (Փիլ. Դ 13): Հիրավի, ամեն ինչի, անգամ անհնարին ձեռքբերումների է ընդունակ այն զինվորը, որի հոգին ամրացած է ցանկացած դժվարություն, մարտահրավեր ու խոչընդոտ հաղթահարելու աննկուն վճռականությամբ: Դուք ամենքդ հետնորդներն ու ժառանգներն եք քրիստոնեական հավատի ոգով զորացած հայ փառապանծ զորավարների ու զինվորների: Նրանք իրենց լույս հավատքին երբեք չեն խառնել վախն ու երկմտությունը:

Նրանց ոգու արիության հիմքն էր առ հայրենին եւ առ Աստված ունեցած անսասան սերն ու վստահությունը: Սովի, հալածանքների, թշնամու հարձակումների ու դավերի դեմ նրանք կրկնում էին. «Աստված է մեր ապավենն ու զորությունը» (Սղմ. ԽԵ 1):

Շարունակությունը՝ էջ 3

Նարեկ եպս Շաքարյանի հուղարկավորությունը



Օգոստոսի 20-ին Գյումրիում, կյանքի 85-րդ տարում, երկարատեւ ծանր հիվանդությունից հետո վախճանվեց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի երիցագույն միաբաններից Նարեկ եպս Շաքարյանը:

Հանգուցյալ սրբազանի աճյունը օգոստոսի 22-ին դրվեց Գյումրիի Յոթվերք Ս. Աստվածածին առաջնորդանիստ եկեղեցում, որտեղ, նախագահությամբ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի լուսարարապետ Հովնան եպս Հակոբյանի, կատարվեց Եկեղեցու կարգ, եւ բազում հոգեւորականներ ու հավատացյալներ վերջին հրաժեշտ տվեցին Նարեկ սրբազանին: Սյունյաց թեմի առաջնորդական տեղապահ Մակար վրդ. Հակոբյանը Պատարագ մատուցեց, որի ընթացքում Գուգարաց թեմի առաջնորդ Սեպուհ արք. Չուլջյանը կատարեց հանգուցյալ սրբազանի վերջին օծումը:

Ս. Պատարագին Հովնան սրբազանն ընթերցեց նաեւ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի խոսքը՝ Նարեկ սրբազանի վերջին օծման եւ հուղարկավորության առիթով, որում ի մասնավորի ասվում է.

«Սիրելինե՛ր, տխրությունը մեր սրտերում՝ հրաժեշտ ենք տալիս Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու վաստակաշատ եւ նվիրյալ սպասավոր Նարեկ եպս Շաքարյանին՝ ուղեկցելով դեպի կյանքի հավիտենական հանգրվանը:

Լուսահոգի Նարեկ սրբազանը Սուրբ Էջմիածնի հովանու ներքո ստացավ իր հոգեւոր դաստիարակությունն ու կրթությունը եւ խորհրդային հասարակարգի պայմաններում, աստվածմերժության դժվարին տարիներին արձագանքելով տերունական կոչին, ստանձնեց կուսակրոն հոգեւորականի առաքելությունը, որպեսզի իր ծառայությունը բերի հավատավոր մեր ժողովրդին, նպաստի ազգային-եկեղեցական կյանքի առաջընթացին: Հոգելույս սրբազանը երկարամյա գովելի սպասավորություն մատուցեց հայոց հոգեւոր կենտրոնում՝ զբաղեցնելով պատասխանատու պաշտոններ: Նա անդամ էր Մայր Աթոռի վերստուգիչ հանձնաժողովի, նաեւ նվիրյալ ծառայությամբ արդյունավորում էր Տիրոջ Խոսքի քարոզչությունն ու Սուրբ Սեղանին սպասավորությունը՝ տարիներ շարունակ լինելով Սուրբ Գեղարդավանքի վանահայրը:

Եկեղեցու պայծառության եւ ժողովրդի առաջընթացի ու հոգեւոր կյանքի վերելքի նախանձախնդրությամբ՝ լուսահոգի Նարեկ սրբազանը շարունակեց իր առաքելությունը՝ որպես Շիրակի թեմի առաջնորդական տեղապահ, ապա նաեւ՝ Ռուսաստանի եւ Նոր Նախիջեւանի, Շիրակի թեմի առաջնորդ: Մեր ժողովրդին պատուհասած ողբերգական երկրաշարժի օրերին եւ աղետին հաջորդած ծանր ժամանակաշրջանում բարեհիշատակ սրբազանը Շիրակի թեմի իր սիրելի հավատավոր զավակների հետ էր՝ կիսելու նրանց վիշտն ու ցավը, ինչպես նաեւ կարեւոր մասնակցություն էր բերում թեմի քաղաքների ու գյուղերի վերականգնողական աշխատանքների եւ վերաշինությունների կազմակերպման ու համակարգման գործում:

Լուսահոգի Նարեկ եպս Շաքարյանը Սփյուռքի Մեր զավակներին եւս իր ծառայությունը մատուցեց՝ սպասավորելով Ֆրանսիայի հայ համայնքներում՝ հայրենիքից հեռու ապրող հայորդյաց ներաշխարհում ամրապնդելով հավատքն առ Աստված եւ սերն ու նվիրումն առ հայրենին: Երկրային իր կյանքի վերջին տարիներին հոգելույս սրբազանը վերադարձավ Մայր Հայրենիք՝ շարունակելով օգտակար ծառայություններ բերել Շիրակի թեմում:

Հիրավի, ցավ է ամենքիս համար Մայր Աթոռի երիցագույն միաբաններից Նարեկ եպս Շաքարյանի կորուստը: Մեր Տերը՝ Հիսուս Քրիստոս, Իր հավատարիմ հետեւորդներին հավիտենական կյանքի ու երանության խոստումը տալով, ասում է. «Ուր Ես եմ, այնտեղ կլինի եւ Իմ ծառան» (Հովհ. ԺԲ 26):

Ի խորոց սրտի աղոթում ենք, որ Տիրոջ այդ խոսքի համաձայն՝ բարեգութն Աստված երկնից երանավետ օթեւաններում լույսերի ու խաղաղության մեջ ընդունի հոգին նորոգ հանգուցյալ Իր սպասավորի՝ Նարեկ եպս Շաքարյանի, արժանի դարձնի հավերժական երանությանն ու խնդությանը եւ Սուրբ Հոգու շնորհներով սփոփանք պարգեւի ամենքիս:

Աղոթք եւ օրհնություն Նարեկ սրբազանի բարի եւ լույս հիշատակին»:

Իսկ օգոստոսի 23-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբանական գերեզմանատանը տեղի ունեցավ Նարեկ եպս Շաքարյանի հուղարկավորության արարողությունը, որին ներկա էին Մայր Աթոռի միաբանները՝ գլխավորությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի:

Ս. Պատարագի եւ վերջին օծման կարգի ավարտից հետո հանգուցյալ Նարեկ սրբազանի աճյունը տեղափոխվեց Մայր Աթոռ՝ ամփոփվելով Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբանական գերեզմանատանը:

Նարեկ եպս Շաքարյանը (ավագանի անունը՝ Արշավիր) ծնվել է 1932 թ. Դամասկոսում: Սկզբնական կրթությունն ստացել է տեղի Սահակյան վարժարանում: 1946 թ. ներգաղթել է հայրենիք եւ հաստատվել Լենինականում: 1956-57 թթ. ավարտել է տեղի միջնակարգ դպրոցը: 1958 թ. ընդունվել է Ս. Էջմիածնի հոգեւոր ճեմարան: 1960 թ. ձեռնադրվել է սարկավագ: 1961 թ. ավարտել է հոգեւոր ճեմարանը:

1961-62 թթ. աստվածաբանության եւ Եկեղեցու պատմության վերաբերյալ դասախոսություններ է ունկնդրել եւ վկայագիր ստացել Զագորսկի հոգեւոր ակադեմիայում: 1962 թ. ձեռնադրվել է կուսակրոն քահանա եւ վերանվանվել Նարեկ աբեղա: Մայր Աթոռում վարել է մի շարք պատասխանատու պաշտոններ:

1963 թ., պաշտպանելով «Հայ եկեղեցական իրավունքը մինչեւ Ը դարը» թեզը, ստացել է մասնավոր վարդապետության աստիճան:

1968 թ. Ազգային-եկեղեցական ժողովում ընտրվել է Մայր Աթոռի վերստուգիչ հանձնաժողովի անդամ եւ այդ պարտականությունը վարել է մինչեւ 1990 թ. վերջը:

1967-1972 թթ. եղել է Ս. Գեղարդի վանքի վանահայր:

1971 թ. դեկտեմբերի 1-ից Ն. Ս. Օ. Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի սրբատառ կոնդակով նշանակվել է Շիրակի թեմի առաջնորդական տեղապահ, իսկ 1973 թ. հոկտեմբերին՝ Շիրակի թեմի առաջնորդ՝ միաժամանակ վարելով Ռուսաստանի եւ Նոր Նախիջեւանի թեմի առաջնորդի պաշտոնը:

1973 թ. ձեռնադրվել է եպիսկոպոս՝ մինչեւ 1990 թ. շարունակելով պաշտոնավարել իբրեւ Շիրակի թեմի առաջնորդ:

1988-90-ին՝ հետերկրաշարժյան աղետի ծանր օրերին, ղեկավարել է թեմի քաղաքների եւ գյուղերի վերականգնողական անհետաձգելի աշխատանքները, մասնակցել նաեւ կարեւոր վերաշինություններին:

1991-2003-ին ծառայել է Փարիզում եւ արվարձաններում, ապա մինչեւ 2008 թ. վարել է Նիսի եւ շրջակայքի հոգեւոր տեսչությունը:

Հանգստյան կոչվելով՝ Նարեկ սրբազանը վերադարձել է հայրենիք՝ վերջին տարիներին իր օգտակար ծառայությունը բերելով Շիրակի թեմին:

ՀԱՅԱՍՏԱՆԸ ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԱՐՇԱԼՈՒՅՍԻՆ

Ջեյմ Ռասսելը հայ ժողովրդի կրակապաշտության մասին

1700 տարի առաջ քրիստոնեության մուտքը Հայաստան հիմնավորելու համար պատմագիտական հետազոտություններում եւ հասարակական քննարկումներում հաճախ արծարծվում են այսպիսի հարցեր՝ արդյո՞ք դա արտաքին հոգեւոր ներթափանցման կամ որեւէ այլ ագրեսիվ գաղափարական ներխուժման հետեւանք չէր, ինչպիսին է այսօր Եհովայի վկաների ագրեսիան Հայաստանում: Ներկայումս որոշ նեղ շրջաններում նկատվող հեթանոսական իմիտացիաների հեղինակները հակված են այդ տեսակետին: Սրա հետ մեկտեղ պատմաբանասիրական նորամուծություններում հմտացած որոշ ուսումնասիրողներ հարում են այն մտայնության,

թե նախաքրիստոնեական շրջանում Հայաստանում տիրապետում էր զրադաշտական կրոնը, որն այստեղ տարածվել էր Կապադովկիայից: Մեր թվարկության III դարի սկզբին Պարսկաստանում հելլենասեր Արշակունիների անկման եւ Սասանյան թագավորների նոր հարստության հաստատման հետեւանքով՝ Կարտիր մոգպետը դարի երկրորդ կեսին Իրանում վերականգնեց Աքեմենյան շրջանում գոյություն ունեցած կրակապաշտության զրադաշտական ուսմունքը, որը տարածվել էր նաեւ Կապադովկիայում եղած պարսկական տաճարներում:

Հայոց հեթանոսական հավատալիքները քննության առարկա էին XIX դարի վերջին բարձրագույն կրթություն ստանալու նպատակով Եվրոպա մեկնած հայ ուսանողների եւ եվրոպացի պրոֆեսորների աճող շփման արդյունքում ծայր առած գիտական հետաքրքրության շնորհիվ: Ուշագրավ են այս առթիվ Ղեւոնդ Ալիշանի «Հայապատում» *(Ղ. Ալիշան, Հայապատում, Վենետիկ, 1901)* եւ Մանուկ Աբեղյանի գերմաներեն «Dâr armenische Volksglaube» («Հայ ժողովրդական հավատալիքը») ուսումնասիրությունները: Վերջինս լույս տեսավ Ենայում (քաղաք Գերմանիայում)1898 թվին եւ բարձր գնահատվեց հայագետ Հայնրիխ Գելցերի կողմից:

Հայոց հեթանոսական պաշտամունքը լուրջ քննության առարկա է եղել անցյալ տասնամյակների ընթացքում ամերիկյան հայագիտության մեջ: XX դարի երկրորդ կեսին ԱՄՆ-ում հրատարակված «Հայ ժողովուրդը հնադարից մինչեւ արդի ժամանակը» *(The Armenian People from Ancient to Modern Times. Vol. 2. Ed. by Richard G. Hovannisian. Palgrave Macmillan US, 1997)* երկհատորյակում շրջանառվեց քրիստոնեություն ընդունելուց առաջ հայերի կրակապաշտ լինելու վարկածը: Այդ մասին անգլերեն ուսումնասիրությամբ 1976 թվին հանդես եկավ Նինա Գարսոյանը *(N.G.Garsoian, «Prolegomena to a study of the Iranian aspects in Arsacid Armenia», Handes Amsoreay, Vienna, 1976, 177-234)*: Դրանից մեկ տասնամյակ անց՝ 1987 թվին, պրոֆեսոր Ջեյմս Ռ. Ռասսելը (այժմ Հարվարդի համալսարանի Հայագիտական ամբիոնի ղեկավար) հրատարակեց «Zoroastrianism in Armenia» *(Zoroastrianism in Armenia. By James R. Russell. Harvard Iranian Series. Volume Five. Richard N. Frye Editor. Published by Harvard University. Department of Near Eastern Languages and Civilizations and National Association for Armenian Studies and Research. Cambridge, MA. 1987)* («Զրադաշտականությունը Հայաստանում») վերնագրով անգլերեն ստվարածավալ (578 էջ) մի ուսումնասիրություն, որն անցյալ չորս տասնամյակում չի արժանացել մեզանում հայ հոգեւոր եւ աշխարհիկ հետազոտողների գեթ

փոքրիշատե ուշադրության, թեեւ բազմաթիվ հայ գիտնականներ եւ եվրոպական լեզուների քաջիմաց հոգեւոր վարդապետներ կարող էին հանձն առնել այդ անհրաժեշտ գործը:

Քանի որ, վերնագրից բխող հեղինակային շատ խնդրահարույց հանձնառությունից զատ, գրքում քննության են առնված բազմաթիվ նոր տեսակետներ եւ աղբյուրներ՝ նվիրված հեթանոսական շրջանի բազմաստվածության, մեհյանների եւ տաճարների պաշտամունքային հարցերին, ինչպես եւ հայ նախաքրիստոնեական աստվածների եւ դիցուհիների փոխառնչությանը՝ արեւմտյան եւ արեւելյան ազգերի հոգեւոր մշակույթի հետ, ուստի շատ ուշագրավ է հեթանոս Հայոց մեջ պաշտված հատկապես Անահիտ դիցուհու պաշտամունքային ավանդությունների եւ նրան բնորոշող մակդիրների համեմատումը համանման իրանական եւ այլ արեւմտյան ու արեւելյան նույնատիպ աստվածությունների (պահլ. Anahita, հուն. Artemis, ինչպես եւ Nane (Nana), Athena, Hera) հետ, որոնց մասին վերջին տասնամյակներում լույս տեսած ուսումնասիրությունները հարուստ գիտահետազոտական եւ պեղածո նյութեր են հայտնաբերել, իսկ դրանք մեծապես հարստացնում են հեթանոսական շրջանի բազմալեզու հոգեւոր մշակույթը:

Շարունակությունը՝ էջ 4

Ամենայն Հայոց Կաթողիկոսի ցավակցագիրը Իսպանիայի թագավորին

Օգոստոսի 18-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը ցավակցական գիր է հղել Իսպանիայի Ֆելիպե Զ թագավորին՝ օգոստոսի 17-ին Բարսելոնայում տեղի ունեցած ահաբեկչության կապակցությամբ:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու հավատացյալների եւ հոգեւոր դասի անունից վշտակցություն է հայտնել Իսպանիայի թագավորին, իշխանություններին եւ ժողովրդին:

«Դատապարտելով Աստծո արարածի կյանքի դեմ այսօրինակ հանցավոր ոտնձգությունը՝ մեր աղոթքն ենք մատուցում Երկնավորին՝ զոհվածների հոգիների խաղաղության ու հանգստության եւ տուժածների շուտափույթ ապաքինման համար:

Մեր զորակցությունը հայտնելով Ձեզ եւ Իսպանիայի բարեկամ մեր ժողովրդին՝ ի սրտե մաղթում ենք Բարձրյալն Աստծո հովանին եւ օրհնությունը՝ հաղթահարելու այս չարիքը եւ վերականգնելու Իսպանիայի խաղաղ ու բնականոն կյանքը»,- ասված է Նորին Սրբության ցավակցագրում:

Մայր Աթոռ Ս. Էջմիածինը հյուրընկալեց ռազմաուսումնական հաստատությունների շրջանավարտներին



Սկիզբը՝ էջ 2

Սիրելիներ՛ն, ձեզ զորացնողը Տեր Հիսուս Քրիստոս է՝ Հորագլուխը Սուրբ Եկեղեցու, եւ ձեր ապավենը՝ հարուցյալ ու հաղթական, Տիրոջ հավատարիմ հոտը՝ մեր ժողովուրդը: Ամեն ինչի կարող կլինեք դուք, եթե ունենաք անսասան վստահություն առ Փրկիչ Տերը եւ սերը՝ առ մեր ժողովուրդը, որոնք ձեր մարտական ծառայությունների մեջ ու դժվարությունների առջեւ ձեզ օգնական ու զորակից են լինելու: Շուտով ամենքդ պիտի կոչվեք մարտական ծառայության՝ մեծ պատասխանատվություն ստանձնելով մեր երկրի ու ժողովրդի առջեւ: Ձեր ամեն մի որոշումից ու ձեր գործերից է կախված լինելու Հայրենիքի ապահովությունը, Հայրենիք, որ սուրբ է ու նվիրական իր հազարամյակների անցյալով, հաղթական ներկայով ու առավել պայծառ ապագայով, որը մեր հանձնառություններով պիտի կերտենք մենք: Մաղթում ենք ձեզ խաղաղ ու անվտանգ ծառայություն՝ հանուն մեր երկրի զորացման ու հավատավոր մեր ժողովրդի բարգավաճման: Մաղթում ենք արթուն միտք ու հոգի, որ Աստծո օգնականությամբ նախանձախնդիր ձեր ծառայությամբ առավել հզորություն բերեք Հայոց բանակին, ապահովություն՝ մեր սահմաններին: Զորացեք Հիսուս Քրիստոսով, աղոթեք հայրենիքում խաղաղության հաստատման հույսով եւ ապրեք ձեր հավատի ու հայրենիքի ազատությունը պաշտպանելու անկոտրում հաստատակամությամբ: Թող Տիրոջ ամենազոր Աջն ու զորությունը հովանի լինեն ձեզ ամենքիդ՝ Հայոց փառապանծ բանակում ձեր գալիք ծառայության ընթացքին: Գիտցե՛ք՝ մեր բոլոր հաղթանակների ու ազգային կյանքի ձեռքբերումների անսպառ աղբյուրը մեր ժողովրդի հոգու անպարտելիությունն է, որն Աստծով զորացած՝ կարողացավ իր պատմության բոլոր փորձությունները հաղթահարել, ցեղասպանությունը վերապրել, հոգեւոր ու մշակութային համաշխարհային մակարդակի ժառանգություն կերտել եւ թշնամական երկրներով շրջապատված լինելով՝ ազգային ինքնությունը անաղարտ պահպանել ու հայրենիք կերտել ու զորացնել:

Գոհունակ սրտով հայրապետական Մեր օրհնությունն ու բարեմաղթանքներն ենք բերում Հայաստանի Հանրապետության ռազմական ղեկավարությանը՝ գլխավորությամբ Հայաստանի Հանրապետության Նախագահ տիար Սերժ Սարգսյանի եւ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարար տիար Վիգեն Սարգսյանի: Մեծապես գնահատելի է, որ մեր պետությունը ջանք ու կարողություն է ներդնում՝ Հայոց բանակը գիտելիքներով եւ հոգեւոր ու բարոյական բարձր արժեքներ կրող զինվորականներով համալրելու գործում:

Թող բարին Աստված խաղաղության մեջ պահպանի Հայրենի մեր երկիրը, հզոր ու աննկուն՝ Հայոց հաղթական բանակը եւ միշտ աջակից լինի աշխարհասփյուռ մեր ժողովրդին՝ ազգային իղձերի ու նպատակների իրականացման ճանապարհին: Եվ թող Տիրոջ ամենախնամ Սուրբ Աջը մշտապես հովանի ու պահապան լինի մեր զորաց ու զորականաց եւ նորանոր հաջողություններ շնորհի հայրենյաց պաշտպաններին նվիրական առաքելության մեջ այսօր եւ հավիտյանս:

Արարողության ավարտին Գեւորգյան հոգեւոր ճեմարանի հանդիսությունների դահլիճում տեղի ունեցավ ընդունելություն, ապա զինվորականներն այցելեցին Մայր Աթոռի թանգարաններ, ծանոթացան Հայոց Եկեղեցու սրբություններին եւ ցուցադրվող հոգեւոր-մշակութային սրբազան ժառանգությանը:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Ե. ՉԱՐԵՆՑԻ ՁԵՌԱԳՐԵՐԻ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Նվիրվում է Ե. Չարենցի ծննդյան 120-ամյակին

Սկիզբը՝ թիվ 14-15

Չարենցյան ձեռագրեր նա հավաքել է նաեւ ուրիշներից, որոնց մասին նրան տեղեկացրել է Իզաբելայի մայրը: Այդպիսիներից մեկը եղել է Անժիկ անունով հիշյալ տիկինը, ով իր հերթին կապված էր Ռեգինայի հետ:

Հովհաննիսյանը շարունակում է. «Տարբեր ճանապարհներով ձեռք բերած՝ քանակով 16 000 անտիպ տող ձեռագիր ժառանգություն համապատասխան գրանցումով ամբողջովին հանձնել եմ թանգարան: Թանգարան եմ հանձնել նաեւ Չարենցի լուսանկարներ եւ հեղինակի մակագրությամբ պոեմների առանձին հրատարակություններ»:

Այնուհետեւ նա տեղեկացնում է, որ 1945 թ. իր ձեռքին է եղել «Թուղթ Իոսիֆ Ստալինին» ուղերձի մեքենագիր օրինակը եւ ռուսերեն գրած ինքնագիր նամակը (որի սկիզբը չէր գտնվել)»: Այդ 74 էջանոց նամակը ներկայացրել է Կենտկոմ՝ Սահակ Կարապետյանին, ուր եւ հետքերը կորել են: «Հետագայում տեղեկացա, որ անվտանգության մարմիններում աշխատող մի սպա (Ռ. Ակոպով) նրան հանձնել է նաեւ Չարենցի ինքնագիր մի բանաստեղծություն, որի հետքերը նույնպես չկան»,- շարունակում է նա:

Այնուհետեւ Հովհաննիսյանը նշում է, որ «իր տրամադրության տակ» եղել են ինքնագրեր. «Իմ ներկայացրած բազմաթիվ անտիպ երկերից 1946-ին լույս տեսած «Ընտիր էջեր»-ում տեղ գտավ միայն «Թուղթ»-ի նախերգը»:

Հովհաննիսյանը նաեւ նշում է, որ Աննա Կոդաբաշյանի խնդրանքով ինքը նրանց տան համար հայթայթել է վառելափայտ, մթերք, իսկ այդ ծառայության վարձատրությունը եղել է Չարենցի ժառանգության մնացած մասը: Նա շարունակում է. «Մեր մտավորականությունից մոտ քսանհինգ հոգի <...> փոքր խմբերով, ծպտյալ կարգով ինձ մոտ էին գալիս՝ <...> Չարենցի ձեռագրերը կարդալու»: Հետո նա ավելացնում է, որ դրանք հանձնել է ԳԱԹ-ին:

Այնուհետեւ նա խոսում է բանտում Չարենցի գրած բանաստեղծությունների մասին: Պատերին գրված գործերով լի մի տետրակ պահպանել եւ բանտարկությունից հետո իր հետ տուն է տարել ՀԼԿԵՄ Կենտկոմի նախկին քարտուղար Միհրան Գեւորգյանը (նույն տեղը, էջ 389-405):

Ավելացնենք, որ Հովհաննիսյանը, իր իսկ վկայությամբ, Չարենցին ճանաչել է 1933-ից, երբ Պետհրատում աշխատել է որպես ՀԼԿԵՄ Կենտկոմի ներկայացուցիչ, ինչը նույնն է, թե կուսակցության գործակալ:

Այն ամենը, ինչ Ռ. Ղազարյանը եւ Ե. Հովհաննիսյանը հանձնել են ԳԱԹ, ուսումնասիրվել է եւ հրապարակվել (տե՛ս Անտիպ եւ չհավաքված երկեր, Ե., ԳԱ հրատարակչություն, 1983, կազմող՝ Ա. Չարենց, Նորահայտ էջեր, Ե., Երեւանի համալսարանի հրատարակչություն, 1996, կազմող՝ Դ. Գասպարյան):

Պատմում է Ռուբեն Զարյանը: Չարենցի ձեռագրերի երրորդ խմբաքանակը հայտնվել է Գ. Էմինի տանը:

Հայտնի է, որ 1936-1937 թթ. Էմինը մոտ-մոտ է արել Չարենցին: Վիգեն Խեչումյանի, Սուրեն Թարյանի հետ՝ որպես երիտասարդ գրողներ, այցելել են տանը մեկուսացած Չարենցին: Այդ մասին Էմինը գրել է իր հուշերում: 1989 թ. իր ծավալուն հուշերը Էմինը տրամադրեց ինձ՝ տպագրելու հիշողությունների՝ նախատեսվող հերթական գրքում, ինչը եւ ես արել եմ 2008 թ. հրատարակության մեջ (որովհետեւ 1997-ին «Նաիրի» հրատարակչության կողմից Էմինի նյութը գրքից հանվեց):

Թե՛ Էմինի, թե՛ Ռ. Ղազարյանի հուշերից եւ թե՛ այլ աղբյուրներից (Արփենիկ Չարենց, Հեղինե Մուրադյան՝ Էմինի հարազատ քույրը, Ռուբեն Զարյան) հայտնի էր, որ Էմինի ձեռքն են ընկել չարենցյան ձեռագրեր: Այդ մասին գրական միջավայրում խոսվում էր: Այդ մասին գիտեինք:

Հայտնի է, որ Հայպետհրատում աշխատած տարիներին Չարենցը մտադիր էր հրատարակել Տերյանի երկերի ժողովածուն՝ ներառյալ նաեւ անտիպները: Այդ նպատակով Խանջյանի թույլտվությամբ ԳԱԹ-ից իր տուն էր տարել Տերյանի ինքնագրերը, հիացել դրանցով, իր օրագրի մեջ գրառումներ արել (14.03.1934), հաճույքով արտագրել եւ ձեռագրերը վերադարձրել թանգարան: Չարենցի նախատեսած Տերյանի հատորը 1940 թ. հրատարակեց Ռ. Զարյանը: Գ. Էմինը Ռ. Զարյանին է տրամադրել Չարենցի արտագրածները, ինչն էլ վերջինս տպագրել է նշված հատորում:

Այս կապակցությամբ Ռ. Զարյանը գրում է. «Գեւորգ Էմինը, լսելով, որ կազմում եմ Տերյանի ժողովածուն, մի գեղեցիկ օր իմ գրասեղանին դրեց թղթերի մի փոքրիկ կապոց: Բացեցի եւ, ո՜վ զարմանք, տեսնեմ Տերյանի՝ Չարենցի ձեռքով արտագրված անտիպ բանաստեղծություններն են: Հուսով եմ, որ Գեւորգ Էմինը օրերից մի օր կգրի, թե որտեղից եւ ինչպես էին իր ձեռքն անցել այդ էջերը» («Սովետական Հայաստան», 1987, 3 հունիս, նաեւ՝ «Չարենցի հետ: Հուշեր», 2-րդ մաս, 2008, էջ 131-139: Հարցի մանրամասն քննությունը տե՛ս Դ. Գասպարյան, «Հայ գրականություն», գիրք 2, 2002, էջ 88-92):

Շարունակության մեջ Ռ. Զարյանը նշում է, որ խոսքը 40 բանաստեղծության մասին է եւ ամփոփում. «Ահա այդ քառասուն բանաստեղծության համար մենք պարտական ենք Գեւորգ Էմինին: Չարենցի ձեռագրերը պահվում են իմ թղթերում եւ արխիվային այլ նյութերի հետ շուտով կդառնան Գրականության եւ արվեստի թանգարանի սեփականությունը»:

Էմինը լռեց եւ ոչինչ չասաց, որովհետեւ շղթան կբացվեր:

Միջանկյալ մտաբերենք, որ Ռ. Զարյանը 1940-ական թթ. բանաստեղծ Էմինին եռանդով պաշտպանում էր քննադատական հարձակումներից: Այսինքն՝ նրանք գրական դաշինքի մեջ էին... նաեւ Չարենցի արտագրած Տերյանի ձեռագրերի հաշվին:

Էմինի քույրը՝ շատ հարգելի Հեղինե Մուրադյանը, կյանքի վերջին տարիներին ինձ հաճախակի էր հրավիրում Գրողների միության դիմաց գտնվող իր տուն՝ գրական զրույցների: Այդ ընթացքում էլ հայտնեց, որ Էմինն ունի չարենցյան ձեռագրեր: Նաեւ ասաց, որ Ռեգինա Ղազարյանի ունեցածը (այն մասը, որ տվել էր Արփիկին) բերում էին իր տուն, եւ Չարենցի ինքնագրերը ինքը, Էմինը, Արփիկը կարդում էին եւ արտագրում: Այս ձեռագրերի խմբաքանակից եւս Էմինը որոշ բաներ տարել է իր տուն: Այդ մասին Ռ. Ղազարյանը մի քանի անգամ ակնարկել է մեր հանդիպումների ժամանակ:

Հ. Մուրադյանն իր արտագրածներից պահպանել էր Չարենցի «Աղասի Խանջյանին» հույժ կարեւոր գրառումը, ինչը նա տրամադրեց ինձ, ես էլ տպագրեցի «Նորահայտ էջեր»-ի մեջ: Հ. Մուրադյանը պահպանել էր նաեւ Չարենցի առանձին ինքնագրեր, բանաստեղծության (կամ պոեմի) տներ՝ քառակուսի փոքր թղթերի վրա (մոտավորապես 10 սմ x 10 սմ չափի):

1995 թ. «Գարուն» ամսագրում (թիվ 5) Էմինը հրապարակեց «Դոֆինը նաիրական» շարքի սոնետների նոր տարբերակներ, որոնք չկային «Անտիպ եւ չհավաքված երկեր» գրքում: Այնպես պատահեց, որ հենց «Գարունի» խմբագրատանն էլ հանդիպեցինք: Իմ հարցումին, թե որտեղ են պահվում ինքնագրերը (քանի որ սկզբնաղբյուրը չէր նշել), նա անորոշ ինչ-որ պատասխան տվեց, թե Չարենցի աներոջից՝ Ավետիս Կոդաբաշյանից ինքն ու Վիգեն Խեչումյանը վերցնում, արտագրում եւ վերադարձնում էին: Չհավատացի այդ հորինվածքին, ինչի մասին մանրամասնորեն գրել եմ «Նորահայտ էջեր» գրքի ծանոթագրությունների բաժնում (տե՛ս էջ 438):

Երբ 1980-1990-ական թթ. հրապարակում էի տարբեր պահոցներից հայթայթած՝ Չարենցի ժառանգության առաձին էջեր, մեկ-երկու բանաստեղծության կապակցությամբ Էմինն ինձ հայտնեց իր տարակարծությունները, ինչը եւս իր հերթին վկայություն է, որ նա տեղյակ էր այլ տարբերակների, գուցե մաքրագիր վերջնական օրինակների մասին:

Ահա այսքանից հետո վերադառնանք բուն դիպաշարին:

Պատմում է Գեւորգ Էմինը: Չարենցին ձերբակալելու, ընտանիքը տնից վտարելու ժամանակ հարկ է եղել այլ իրերի հետ մեկտեղ տեղափոխել նաեւ Չարենցի ձեռագրերն ու գրադարանը: Սա՝ ա՛յն ժամանակ, երբ Չարենցի կինը դեռեւս ձերբակալված չէր: Ահա այս ընթացքում շատ եռանդուն գործունեություն է ծավալել Էմինը: Օգնել է տեղափոխման գործին եւ այս միջոցում էլ Չարենցի թղթապանակների պարունակությունը փոխադրել իր տուն:

Շարունակությունը՝ էջ 6

ՀԱՅԱՍՏԱՆԸ ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԱՐՇԱԼՈՒՅՍԻՆ

Սկիզբը՝ էջ 3

Անհրաժեշտ եմ համարում նշել, որ ներկա ուսումնասիրության մեջ հեղինակ պրոֆ. Ռասսելը դրսեւորել է հայ հին մատենագիրների եւ նրանց պատմամշակութային ժառանգության նկատմամբ անհամեմատ ավելի նրբանկատ եւ հարգալից վերաբերմունք, քան մինչ այդ դրսեւորվել է ամենից առաջ ԱՄՆ-ում հրատարակված եւ շատ քննադատված «Հայ ժողովուրդը հնադարից մինչեւ արդի ժամանակը» երկհատորյակում:

Ասվածի հետ միասին ես խիստ վերապահումով եմ անդրադառնալու պրոֆ. Ջեյմս Ռասսելի որդեգրած հայ ժողովրդի նախաքրիստոնեական կրակապաշտության կոնցեպտին, որը հաստատելու համար նա հենվում է ինչպես Զորոաստրիզմին եւ դրան հարող պաշտամունքներին նվիրված օտարալեզու բազմաթիվ հետազոտությունների, այնպես էլ մազդեզական կրոնի եւ զրադաշտական ուսմունքի վերաբերյալ V-VII դարերի հայ հին հեղինակների (Ագաթանգեղոս, Եզնիկ, Եղիշե, Փարպեցի, Սեբեոս եւ այլն) պատմական երկերում տեղ գտած բանավիճական արձագանքների եւ դրանցից քաղված առանձին արտահայտությունների եւ եզրույթների մեկնաբանման վրա: Հակառակ հայ հին հեղինակների ընդդիմախոսության՝ պրոֆ. Ռասսելը նրանց եզրակացությունները եւ մեկնողաբար օգտագործած զրադաշտական տերմինները հիմք է դարձրել իր համար՝ առաջ բերելու եւ հիմնավորելու համատարած կրակապաշտության գաղափարը նախաքրիստոնեական հեթանոսական Հայաստանում:

Այդ ուսմունքի հիմնադիր Զրադաշտ մոգի մասին մեր հին մատենագրության մեջ որոշ պատկերացում է տալիս նախ եւ առաջ Մովսես Խորենացին՝ օգտվելով, իր խոսքով ասած, իրեն շատ սիրելի եւ շատերից ավելի արդարախոս Բերոսյան Սիբիլլայից: Զրադաշտ մոգը բակտրիացիների կամ մեդացիների թագավորն էր, որին Շամիրամը կուսակալ եւ Ասորեստանի ու Նինվեի վերակացու էր թողնում, երբ ամառները գալիս էր Հայաստանում շինած իր ամառանոցը *(Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց, Տփղիս, 1913, գիրք Ա. Զ, էջ 23)*: Իսկ երբ Զրադաշտը տիկնոջ դեմ մի սխալանք գործեց, գշտության պատճառով Շամիրամը նրա դեմ պատերազմ սկսեց, քանզի մարը (իմա՝ Զրադաշտը) մտադիր էր բռնանալ ամենքի վրա. Շամիրամը փախավ Հայաստան եւ այստեղ սպանվեց իր կրտսեր որդու՝ Նինվասի ձեռքով *(Խոր., Ա. Զ, էջ 23, Ա. ԺԷ, 55, 56)*: Շամիրամի եւ Զրադաշտ մոգի ժամանակակցությունը կարող է հարուցել ընթերցողի տարակուսանքը, սակայն հարկ է նշել, որ զանազան զրույցները հաշվի առնելով՝ մասնագետները եկել են այն կարծիքի, որ ուսմունքի հիմնադիր Զրադաշտ մոգը (Ավեստայում՝ Զարաթուշտրա, միջին պարս.՝ Զարդուշտ, հուն.՝ Zoroaster, իսկ անձնանունը՝ Սպիտամա) ապրել եւ գործել է մ. թ. ա. 1000-ից 500 թվերի միջակայքում *(Meyers Neues Lexikon in acht Bänden. Band 8, Leipzig, 1964, S. 846)*:

Շարունակելի

Ալբերտ ՄՈՒՇԵՂՅԱՆ

Բանասիրական գիտ. դոկտոր

ԻՆՔՆԱԿԵՐՊԱՎՈՐՎԱԾ ՉԱՐԵՆՑԸ «ԵՐԿԻՐ ՆԱԻՐԻ» ՎԵՊՈՒՄ ԵՎ ԿԱՐՍԻ ԱՆԿՈՒՄԸ ՆՐԱ ՀԱՅԱՑՔՈՎ

Նվիրվում է Ե. Չարենցի ծննդյան 120-ամյակին

5

Սկիզբը՝ թիվ 12-15

Քաղաքի ու Երկիր Նաիրիի անկման գլխավոր պատճառներից մեկը 1917 թ. ամբողջ Ռուսաստանով մեկ տարածված փետրվարյան հեղափոխությունն էր, որի պետականակործման ալիքն արդեն մարտի 2-ին հասել էր Կարս, որը թեեւ հայկական, բայց Ռուսաստանի ենթակայության քաղաք էր՝ իր «գլխավոր Սոխ» գավառապետով, բանակի հրամանատարական ու սպայական օտարախոս կազմով, զինվորական փողային երաժշտախմբով ու բոլորի կողմից անվերջ հոլովվող «Боже царя храни» երգով, թեեւ քաղաքի իրական պաշտպանները կանադական զինատեսակներին դեռեւս անվարժ տրեխավոր հայ գյուղացիներն էին, որովհետեւ Կարսի հարուստ երեւելիները, բոլշեւիկյան քարոզչության հետեւանքով, երկրի ու քաղաքի պաշտպանությունն իրենց գործը չհամարելով՝ իրենց զավակներով հեռացել էին քաղաքից:

Իսկ բուն զո՞րքը... Հեղափոխականորեն տրամադրված ցարական բանակն այլեւս կռվելու ցանկություն չուներ, այլ բոլշեւիկյան հրահանգավորումով հենց իր պետական իշխանության դեմ էր պայքարում: Քաղաքում ստեղծվել էր անհասկանալի մեծ խառնաշփոթ, որից գլուխ չէին հանում շատերը: Հեղափոխական այդ օրերին հատուկ հանձնարարությամբ Կարսում հայտնվում է բոլշեւիկ Կարո Դարայանը եւ իջեւանում իր ազգական պ. Մարուքե Գրաստամատյանի տանը: Հենց այդ օրերին էլ բերդից դուրս են գալիս «զորքե՛ր, զորքե՛ր, զորքե՛ր, գնդացիր ու թնդանոթ», բայց ոչ թե Հավիտենական Հիվանդի կամ դարավոր ոսոխի դեմ կռվելու, այլ սեփական իշխանությունների, պետական կառույցների, գավառապետի ու ոստիկանապետի դեմ էր «ուռռա՛ա՛ա՛» կանչելով գրոհում ապստամբած զորքը. **«- Հը՞, բան մը կհասկնա՞ք սա դալաբալը-ղեն**,- հարցրեց Հաջի Օնիկ էֆենդին սրճարան մտնելով. «-Ընչի՞ չենք հասկնա օր»,- կտրուկ պատասխանեց Տելեֆոն Սեթոն.- «**զորքին պրիկազ է էկե օր ռեւոլյուց էնեն**»,- վերջացրեց Տելեֆոն Սեթոն, ու տիրեց լռություն» (5, 202):

Իսկ «ռեւոլյուց էնողներին» կազմակերպում էին բոլշեւիկ Կարո Դարայանն ու պ. Մարուքե Գրաստամատյանը եւ խիստ կասկածելի օրիորդ Սաթոն: Հենց նրանք են բնակիչների շրջանում խուճապ առաջ բերել, զինվորներին գրգռել հրամանատարության դեմ, նվաստացնելով ու անարգելով պոկել գլխավոր Սոխի՝ գավառապետի ուսադիր-«չինները»: Այս իրողությունների գեղարվեստական պատկերն են վեպի առաջին մասերը, որոնք ներառում են նաեւ մանր առեւտրականների, արհեստավորների, խաղաղ առօրյայով ապրող, իրենց ապագայի հանդեպ անհոգ նաիրցիների, ասենք, գիշերները իր պատրաստած դագաղների մեջ քնող Մեռելի Ենոքի, «վակզալի մեյդանում չայ ու կալբաս ծախող» Քոռ Արութի, եղեռնից մազապուրծ մշեցի գաղթական Թաթոյի եւ Կարսում ապաստանած մյուս գաղթականների նկատմամբ հեղինակային վերաբերմունքը: Իհարկե, միանգամայն այլ է գավառապետի կամ «գլխավոր սոխի», բոլշեւիկների՝ «քամի թռցնող» կամ «քամի կուլ տվող» Կարո Դարայանի, պ. Մարուքե Գրաստամատյանի, զանազան բամբասանքներ տարածող «պսակի չարժանացած», ծամը կտրած օրիորդ Սաթոյի (որին խառնակչական գործունեության համար նաեւ «դարմանի տակի ջուր» էին անվանում, վարսավիր Վասիլի եւ մյուսների հանդեպ:

Ազնիվ օրագրողի պես Չարենցը գրել է, որ ինքը մեկ տարի բացակայել է քաղաքից. իսկ սա նշանակում է, թե Չարենցը գերազանցապես ներկայացրել է անձամբ իր տեսածը եւ միայն այդ մեկ տարվա իրադարձություններն է պատկերել ուրիշներից լսածների կամ սեփական ուսումնասիրությունների հիման վրա: Իսկ այդ «մեկ տարին» մոտավորապես համապատասխանում է 1917-1918 թթ., երբ բանաստեղծը մեկնել էր Ռուսաստան եւ հոկտեմբերյան ու քաղաքացիական կռիվներից ստացած ներշնչումով գրել իր հեղափոխական պոեմները: Բայց այդ ժամանակամիջոցում Հայաստան-Նաիրիում էլ եղել են լավ կամ վատ, կարելի է ասել՝ ճակատագրական իրադարձություններ: 1918 թ. մայիսյան դեպքերն ավարտվեցին թուրք նվաճողների դեմ Սարդարապատի, Ապարանի եւ Ղարաքիլիսայի ճակատամարտերում հայերի պատմական հաղթանակով եւ Հայաստանի Առաջին Հանրապետության ստեղծումով: Վերջին իրադարձությունն ինչպե՞ս է ընդունել Չարենցը: Կարծես նրա համակրելի հերոսը՝ Մազութի Համոն է խոսում հեղինակի անունից, բայց սա հենց Չարենցի խոսքն է. «Շատ ջրեր էին հոսել նաիրյան այդ քաղաքի եւ ընդհանրապես Նաիրիի ու աշխարհի վրայով այդ մի տարվա ընթացքում, երբ ես բացակայում էի քաղաքից ու Նաիրիից, եւ ամենանշանավորն ու կարեւորն այն էր, որ այդ ջրերի հետ մեկտեղ **հոսել էին նաեւ բանակները Նաիրիից** ու այդ **քաղաքից**, եւ Նաիրին ու այդ քաղաքը մնացել էին Մազութի Համոյին ու նաիրցիներին, երազյալը կարծես երկրային էր դարձել, Մազութի Համոյի ուղեղից սահելով՝ մարմնավորվել էր կարծես երկիրը Նաիրի: Հավաքել էր «**Ընկերությունը**» եւ **գրավված վայրերն** էր ուղարկել բազում ու անհամար **նաիրյան ռազմիկներ**, դարերի մուժից, մշուշից ելնելով՝ հառնել էր, վերջապես, **նաիրյան կարծր ոգին**, գրավել էր շեներ ու քաղաքներ. բռնել էր **Բերդը**: Անթիվ տարիներից, դարերից հետո վերստին նաիրյան դարձած **Առաքելոց եկեղեցում** նաիրյան հնամյա բարբառով աստվածահաճո պատարագ էր անում արդեն **տեր Հուսիկ քահանան - Խաչագողը**, ու բերդի ամենաբարձր աշտարակի վրա եռագույն դրոշ պարզած՝ **Բերդի** հրամանատարն էր **Ընկ. Վառոդյանը**» (5 , 231, ընդգծ. Ե. Չարենցի): Այս ամենին պետք է գումարել նաեւ պետականության մյուս կարեւոր խորհրդանիշը՝ այն, որ «Боже царя храни»-ի փոխարեն արդեն հնչում էր նաիրյան հիմնը՝ «Մեր հայրենիքը», ստեղծվել էր հայրենի կառավարություն, վերակառուցվել՝ կրթահամակարգը, եւ Արամ Անտոնիչն էլ դարձել էր ազգային դպրոցների տեսուչ: Ցնծության մեջ էր ժողովուրդը. վերջապես դարերի հպատակությունից հետո վերականգնվել էր նաիրցիների երազած ինքնիշխան պետականությունը:

Ապագայի հանդեպ թերահավատների եւ ընդդեմ երկիր Նաիրիի գործիչների նկատմամբ Չարենցը դրսեւորել է խստագույն արհամարհանք, կծու հեգնանք, որ երբեմն էլ վերածվել է բուռն զայրույթի:

Շարունակությունը՝ էջ 7

ԷՋՄԻԱԾՆԻ ՏՊԱՐԱՆԸ ՈՒ ԹՂԹԻ ԳՈՐԾԱՐԱՆԸ



Սկիզբը՝ թիվ 15

Եվ ահա Սիմեոն կաթողիկոսը որոշում է Էջմիածնում կառուցել նաեւ թղթի գործարան: Նա Եվրոպայից հրավիրում է թղթաշինության գործում հմուտ արհեստավորների, ովքեր տաճարի հարավային կողմում, որտեղ առաջ պարտեզ էր՝ «խաղավարտ սեղխենիք սերմելու համար», կանգնեցնում են թղթի գործարանի շենքը՝ մի եկեղեցու չափ, տաշած քարերով եւ կրով, 20 գազ երկարությամբ, 9 գազ լայնությամբ: Այդ մասին Զարբհանալյանը գրում է. «...յԵւրոպայէ հմուտ արուստագէտներ բերել տալով, 1774-ին տաճարին հարաւային կողմը ու անկէ բաւական հեռու՝ մեծ շէնք մը կառուցանելով, հոն զետեղեց թղթաշինութեան համար բերել տուած գործիքները»: Թղթարտադրության համար անհրաժեշտ երկու կարեւոր պայմանները՝ բամբակի ու ջրի (որոնցով օժտված էր Արարատյան դաշտավայրը) առատությունը, մեծ հաջողություն էին խոստանում: Թղթագործարանը եւս կառուցվում է մադրասցի բարերար Գրիգոր Խոջաջանյանի ծախսերով: Այդ ժամանակ Պարսկաստանում կային թղթի գործարաններ, սկզբում Սիմեոնն այնտեղից է վարպետներ բերել տալիս, բայց նրանք չեն կարողանում գործը գլուխ բերել: Տեսնելով, որ գործը շատ է ուշանում, Սիմեոն կաթողիկոսը խնդրում է Գրիգոր Խոջաջանյանին, որ վերջինս ինքը վարպետներ գտնի՝ գործարանը սարքի գցելու եւ թուղթ արտադրելու համար: Գրիգորը պայմանագիր է կնքում Փարիզից Կ. Պոլիս եկած երկու վարպետների՝ Բեյսոնի (Բիսիոն) եւ Դեսիոռի հետ. նրանք պարտավորվում են 2 տարվա ընթացքում ամբողջովին ոտքի կանգնեցնել տպարանը, ինչպես նաեւ՝ իրենց արվեստը սովորեցնել աշակերտների, ովքեր իրենց ժամկետը լրանալուց հետո կշարունակեին թղթի արտադրության գործը: Բացի ուտելիքից եւ ընծաներից՝ Գրիգոր աղան խոստանում է 14.000 ռուբլի վարձ եւ նրանց հետ դնում մի լեզվագետ-թարգմանչի՝ Աղթամարի կաթոլիկ համայնքից:

Սակայն վարպետները գործի հենց սկզբից սկսում են դժվարություններ հարուցել՝ կամենալով առանց գործը կատարելու վերցնել դրամը եւ փախչել: Մեծ վարպետը շուտով պահանջ է դնում արձակելու փոքր վարպետին, որպեսզի ինքը կարողանա գործից գլուխ հանել եւ լավ թուղթ տալ: Հայոց հայրապետը համաձայնում է, արձակում է փոքրին եւ վերադարձնում Կ. Պոլիս: Դրանից հետո մեծ վարպետը նոր պահանջ է դնում, այն է՝ 6 տարվա պայման կապել եւ վարձը տալ՝ գործը վերջացնելու համար: Բայց կաթողիկոսը պահանջում է դեռեւս իր շնորհը ցույց տալ: Այդպես 2 տարի ապարդյուն ձգձգվում է գործը. Բամբակաձորի անտառներից հսկայական գերաններ են բերել տալիս գործիքների համար, այդ գերանները սղոցելու համար էլ հեռավոր վայրերից հատուկ վարպետներ են կանչում: Այսպես լրանում է 2 տարին, բայց գործն առաջ չի գնում: Սիմեոնը զայրացած իր մոտ է կանչում վարպետներին եւ պահանջում խոստացած աշխատանքը: Վարպետները ստիպված են լինում խոստովանել, որ ուխտել են իրենց իմացած արհեստը ոչ ոքի չսովորեցնել: Բայց երբ Սիմեոնը սպառնում է սառցատուն նետել նրանց, վերջիններս զղջում են եւ 6 ամիս ժամանակ խնդրում՝ իրենց հանձն առած գործն ավարտելու համար: Կաթողիկոսը տալիս է նրանց խնդրած 6 ամիսը եւ իր կողմից թղթի գործարանի վերատեսուչ նշանակում Իսահակ արք. Գեղամյանին, ում հսկողությամբ շուտով գործարանը ոտքի է կանգնում 1776 թ.:

Նոր արտադրված թղթով կաթողիկոսը շտապում է տպել իր «Գիրք որ կոչի Պարտավճար» աշխատությունը, որի տպած օրինակը ուղարկելով Գրիգոր աղային՝ միաժամանակ հայտնում է նրան, որ գործարանի վրա հավելյալ ծախսվել է 7800 պարսկական թուման: Գրիգորը, ստանալով իր նվիրաբերության առաջին պտուղը, իսկույն ուղարկում է ծախսված գումարը եւ, ի նշան շնորհակալության, հայոց հայրապետին ուղարկում 400 զույգ ընտիր հախճապակե ըմպանակ ու այլ ամանեղեն, որոնց վրա հայերեն ոսկեգրված էր՝ «Ի վայելումն Տեառն Սիմեոնի սրբազան կաթուղիկոսին ամենայն Հայոց: Ի ՌՄԻԶ. (1777) թուին»:

Շարունակությունը՝ էջ 7

ՄԱՐԻԱՄ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ՎԵՐԱՓՈԽՄԱՆ ՏՕՆԸ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿԵԱՆՔՈՒՄ

Սկիզբը՝ թիւ 14-15

Գրիգոր Մարաշեցին 1149-ին շատ ծանր է տարել թուրք բարբարոսների ներկայութիւնը, դաժանութիւնները, եւ այդ դժնի օրերին ողբերգական տարրերը, վայերն ու ողբերը բնականաբար մեծ տեղ են գրաւել նրա ստեղծագործութեան մէջ: Բոլորովին ուրիշ տրամադրութեան ու բնոյթի գործեր է գրել նա յարաբերաբար խաղաղ պահերին: Ամենայն հաւանութեամբ այդ կարգի գործերը, որ ստեղծուած են հանդարտ ու հանգիստ սրտով, երբեմն ներշնչանքով, նախորդել են Վայգրքին, յամենայն դէպս աւելի տանելի ժամանակների արգասիք են: Երբ նրա միտքը դեգերել է ուրիշ մի աշխարհում, ուրիշ հետաքրքրութիւններով է առաջնորդուել, գրել է մասնաւորաբար Աստուածածնին նուիրուած գործեր: Սրանց պակը, ինչպէս նշեցինք, Վերափոխմանը նուիրուած «Բան գովեստից» երկն է, որով եւ հայ մատենագրութեան մէջ Գրիգոր Մարաշեցին բացել է նոր մի ճանապարհ, դրամատիկ ձեւի կիրառումով:

Օգտուելով Նոր Կտակարանից, առաւելապէս Ղուկասի Աւետարանից, հեղինակը շատ սեղմ, ծայրաստիճան հակիրճ ընդհանրացումով ներկայացնում է Աստուածամօր Վերափոխումը: «Ծնունդը, սնունդն ու քաղաքավարութիւնը» թէպէտ նշուած է խորագրում, բայց երկը կառուցում է՝ առանցք ունենալով միայն Վերափոխումը, որ գլխաւորն է եւ եզակի երեւոյթ՝ մահկանացու մարդու ճակատագրի առումով, անդրադարձ է կատարում Աստուածածնի պատկերի աւանդութեանը՝ զերծ մնալով շատ մանրամասնութիւններից (Մանրամասնութիւններն ըստ էութեան հետաքրքրական են եւ, անշուշտ, Մարաշեցին գիտակցաբար անտեսել է դրանք՝ համարելով, որ, այնուամենայնիւ, անհարկի կծանրացնեն իր խօսքը: Այդպիսի մանրամասներ կան ե՛ւ Յայսմաւուրքի, ե՛ւ պարականոն բնագրի մէջ): Այդ հակիրճ կենսապատումը ուղեկցւում է զանգուածային տօնախմբութեան տեսարաններով, համաժողովրդական ցնծութեամբ, արձակի, ազատ ոտանաւորի եւ «չափաւ բանի» համադրութեամբ:

Աստուածածնի Վերափոխումը Դ. հարիւրամեակից պահպանուած պարականոն «Մարիամի Վերափոխման մասին» բնագրով է յայտնի դարձել: Շատ չանցած Եկեղեցին սկսել է տօնել Վերափոխումը կամ Ննջումը, յարգել Աստուածածնի պատկերը:

Մեզ հետաքրքրող երկը կարելի է պայմանականօրէն երկու տեսարանի բաժանել: Գործողութիւնների վայրը նախ երկիրն է, ապա՝ երկինքը: Ստեղծագործութեան ծաւալումին իրենց մասնակցութիւնն են բերում Գաբրիէլ հրեշտակապետն իբրեւ երկնքի ներկայացուցիչ, եւ Պետրոս առաքեալը՝ այսպէս ասած՝ ժողովրդի, հանրութեան: Հանդէս են գալիս տօնողների խմբերը: Իսկ սրբուհու պատկերը կոչուած էր մի տեսակ փոխարինելու բնորդին:

Ինչպէս ժամանակին Գաբրիէլ հրեշտակապետը Մարիամին աւետել էր Յիսուսի ծննդեան մասին, Մարաշեցու երկը նոյնպէս սկսւում է հրեշտակապետի աւետումով. նա է ըստ էութեան գլխաւոր հանդիսավարը:

Պանդխտութեանդ ժամանակը լրացաւ,- ասում է հրեշտակապետը Մարիամին,- այժմ արի քո հայրենի ժառանգութիւնը, «Նախասահմանեալ աւուրքն կատարեցան: Հետեւեա՛ ի գաւառն յորում բաղձայիր: Լինելդ քո ի վայրդ ըստորին՝ որ է տեղի հանդիսի, զլրումն էառ: Արդ՝ ե՛կ եւ ընկա՛լ զպսակն յաղթութեան: Զբարիոք մարտն մարտեար քաջութեամբ եւ ի մրցանակն եւս փութասջի՛ր: Զընթացսն կատարեցեր արիութեամբ, ժա՛մ է եւ յաղթանակին վայելման: ... Յուսով քաջապնդեալ հաստատեցար, ճեպեա՛ անյապաղ ի հանդիպումն՝ որոց յուսայիրն» (թղ. 42ա): Եւ Աստուածամայրն աղօթքով դիմում է Որդուն (թղ. 42բ-44ա):

Տեսնելով, որ եկել է Տիրամօր Վերափոխման պահը, մաքսաւոր կոյսերը յայտնում են իրենց մտահոգութիւնը. «Ո՛վ մայր Լուսոյ եւ առագաստ սրբութեան, ահաւասիկ զքեզ ունէաք փոխանակ Տեառն մերոյ եւ Միածնի որդւոյ քոյ, եւ յամենայն վիշտս եւ ի նեղութիւնս՝ որ տիրասպանիցն գայր ի վերայ մեր՝ քեւ մխիթարէաք: Եւ արդ քո լքանելով զմեզ զի՞նչ լինիցիմք մեք՝ տկարքս... ո՛չ զոք ունելով օգնական, ո՛չ սփոփիչ ի տրտմութեանս, ո՛չ քաջալերիչ ի վիշտս, ո՛չ զօրացուցիչ ի տկարութիւնս» (44ա): Այստեղ է ի յայտ գալիս Աստուածածնի պատկերի պաշտամունքի խնդիրը: «Իսկ արդ՝ հրաւիրեալ սրբուհին ի փոխումն առ Որդին իւր, յայտնեալ աւետարանչին Յովհաննու զփայտն կիպարիս յորմէ կենսաբեր խաչն, եւ մեծաւ թախանձմամբ կերպաձեւէ զպատկեր Տիրամօրն առ ի կենալ նշխար կենաց մերոց առ անձուկ սրտին իւրոց՝ յոյժ բաղձացեալ աւետարանչին» (Յայսմաւուրք ըստ կարգի ընտրելագոյն օրինակի Յայսմաւուրաց Տէր-Իսրայէլի, խմբագիր-հրատարակիչ Գրիգոր Փեշտմալճեան, յՕրթագիւղ, 1834, Օգոստ. ԺԵ., Նաւասարդի Ե., [մասն Բ.,] էջ 79):

Շարունակությունը՝ էջ 8

Ե. ՉԱՐԵՆՑԻ ՁԵՌԱԳՐԵՐԻ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Նվիրվում է Ե. Չարենցի ծննդյան 120-ամյակին

Սկիզբը՝ էջ 4

Չարենցի ձեռագրերի կապակցությամբ Էմինը գրում է. «Չեմ կարող ասել, թե ինչքան էր անցել Չարենցի բանտարկության օրվանից, բայց տունն ու հատկապես Չարենցի աշխատասենյակը տակնուվրա էր արված: Հավանաբար եկել խուզարկել էին: Մենք՝ Վիգենի [Խեչումյան] եւ Իզաբելայի [Չարենց] հետ իսկույն գործի անցանք եւ հավաքեցինք գրքերը, թղթերը, ձեռագրերը, մանր-մունր իրերը: Թղթերի եւ ձեռագրերի 20 թղթապանակ ստացվեց:

Իզաբելայի մոր՝ Աննայի ասելով՝ ձեռագրերի մի մասը Չարենցն ու նրա կինը պահ էին տվել Անժիկ անունով մի կնոջ եւ նրա ընկերուհուն (հետագայում պարզվեց, որ դա նկարչուհի Ռեգինա Ղազարյանն է եղել): Ըստ Ռեգինա Ղազարյանի տպագրված հուշերի՝ այդ ձեռագրերը բանտարկությունից առաջ Չարենցը պահ է տվել միայն իրեն»:

Միջանկյալ նշենք, որ Ռեգինա Ղազարյանը գրում է ոչ թե «բանտարկությունից առաջ» իրեն պահ տրված Չարենցի ձեռագրերի, այլ բանտարկությունից հետո Չարենցի ցուցումով իրեն վստահված թղթապանակների մասին:

Այնուհետեւ Էմինը շարունակում է. «Թե ինչ եղան այդ քսան թղթապանակների մեջ դասավորածները, հայտնի չէ, որովհետեւ հետագայում Իզաբելային հատկացված նոր բնակարանում կամ սենյակում մնացել էին միայն մեկ թղթապանակի չափ ձեռագրեր, լուսանկարներ եւ Չարենցի սեւ կազմով «Երկեր»-ի իր իսկ ձեռքով ուղղված օրինակը (որի մեջ կային շատ մակագրություններ ու ձեռագիր բանաստեղծություններ)»:

Չարենցին ձերբակալելուց հետո նրա բնակարանը հատկացնում են պրոլետգրող Անուշավան Վարդանյանին, իսկ Չարենցի կնոջն ու երեխաներին տեղափոխում «Ինտերնացիոնալ» շենք (Մաշտոցի պողոտա, օպերայի դիմաց, որի առաջին հարկում մի ժամանակ «Հանքային ջրեր» խանութն էր): Իզաբելային բանտարկելուց հետո այստեղից նրա ծնողների տուն են տեղափոխում եղած-չեղածը, նաեւ ձեռագրերն ու գրքերը: Էմինը շարունակում է. «Չարենցի իրերը տեղափոխելիս, ավա՛ղ, այլեւս չկային այն ձեռագրերը, որոնք ես, Վիգենը եւ Իզաբելան դասավորել էինք քսան թղթապանակների մեջ...

Մնացել էին միայն մի բուռ թղթեր, ձեռագրեր, լուսանկարներ, մանր-մունր իրեր... Վախենալով, թե կարող են հանկարծ գալ տեսնել եւ տանել նաեւ այդ թանկ մասունքները՝ ես ու Վիգենը խոհանոցի պահարանի հատակի տակ մի ուրիշ տախտակ էլ մեխեցինք, երկու տախտակների արանքում թաքցրեցինք այդ ամենը եւ մի կերպ այդ պահարանն ու մնացած իրերը տեղափոխեցինք Իզաբելայի հարազատների տուն: <...>: Ես ու Վիգենը պահարանի տակ մեխած մեր տախտակը պոկեցինք եւ Իզաբելայի հորը խնդրեցինք. «Էս թղթերն էլ մեզ տուր...»: <...>: Բայց նա չտվեց, երեւի վախենալով, թե կիմանան ու կհարցնեն: Միայն թույլ տվեց, որ տանենք տուն՝ կարդանք ու բերենք...

Տարանք, հափշտակությամբ կարդացինք, արտագրեցինք եւ մեծ մասը ետ բերինք [այսինքն՝ մի մասը ետ չի բերվել]: Հետո իմացանք, որ գրականության թանգարանի անունից եկել ու տարել են...

Ինձ մոտ եղածի մի մասը ես 1940 թվականին տվեցի Ռուբեն Զարյանին (Տերյանի գրքի հրատարակման նախօրյակին), իսկ մյուս մասը՝ <...> Արփենիկ Չարենցին («Երկեր»-ը, շատ լուսանկարներ, մանր-մունր իրեր եւ այլն)» («Չարենցի հետ: Հուշեր», մաս 2, Ե., 2008, էջ 188-191):

Դժբախտաբար, այդ ժառանգության հետ Էմինը չվարվեց այնպես, ինչպես վայել էր Չարենցին: Էմինն ինքը պետք է այդ ամենը հրապարակեր, գրեր մի բացատրական առաջաբան, պատմեր ամեն բան ինչպես եղել է եւ եղածը ներկայացներ հանրությանը: Էմինն ապրեց նաեւ անկախության տարիներին, այլեւս չկային նախկին գաղափարական սահմանափակումն ու վախը: Դրանով նա փառքով կպսակեր 1951-ին Ստալինյան երկրորդ աստիճանի, 1976-ին ԽՍՀՄ Պետական մրցանակների դափնիներով զարդարված իր անունը: Էմինն այդպես չվարվեց...

Էմինի պահած Չարենցի ինքնագրերն անցան նրա կրտսեր որդուն:

Չարենցի ժառանգության մնացած հետքերը: Յուրաքանչյուր քայլ մեզ պետք է մոտեցնի Եղիշե Չարենցին եւ ճշգրտի ու լրացնի նրա կյանքի ու գործի որեւէ դրվագ: «Երկերի ժողովածու»-ի (1962-1968) վեցհատորյակին, «Անտիպ եւ չհավաքված երկեր»-ին (1983), «Նորահայտ էջեր»-ին (1996) եւ «Գիրք մնացորդաց»-ին (2012) պետք է ավելանա եւս մի նոր հատոր ու ի մի բերի նրա ժառանգության անհայտ մասը: Այդ ամենը նոր խմբագրությամբ պետք է հիմք դառնա Չարենցի վաստակի գիտական հրատարակության տասը հատորյակի համար:

Անտարակույս է, որ չարենցյան էջեր դեռեւս կան առանձին անձանց գգրոցներում, ովքեր պիտի բարի լինեն, եւ ինչ որ պահպանվել է, հանեն ասպարեզ: Այդ նպատակով ժամանակագրական հերթականությամբ ներկայացնենք Չարենցի բացակա ժառանգության հասցեները: Դրանց մի մասն անվերադարձ կուլ է գնացել ժամանակին, իսկ մի զգալի մասն ունի իր որոշակի պատկանելությունը, եւ պետք է հուսալ, որ դրանք երբեւէ լույս աշխարհ կգան:

Գ. Մահարու եւ այլոց հիշողություններից հայտնի է, որ 1920-ական թթ. սկզբներին Չարենցը գրել է 50 գազել եւ թողել միայն մեկը՝ նվիրված մորը: Մյուսների ոչնչացումը պատճառաբանել է նրանով, թե հիմա կյանքը փոխվել է, եւ գազել գրելու ժամանակ չէ (տե՛ս Գ. Մահարի, Երկերի ժողովածու, II, 1967, էջ 367-368): Նույն կերպ գրազով Գառնիկ Քալաշյանին խոստացել է մեկ գիշերվա ընթացքում գրել 100 քառյակ, սակայն գրել է 65-ը եւ հաջորդ օրը՝ կարդալուց հետո, բոլորն էլ պատռել: «Կարծեմ ճղածներս հավաքել պահել են» (Հիշողություններ Եղիշե Չարենցի մասին, 1961, էջ 387),- եթե հուշագիրը ճիշտ է մտաբերում Չարենցի այս խոսքը, ուրեմն, հնարավոր է, որ դրանք կան:

1922-ին Չարենցն ապրել է Երեւանի Օմար Խայամ փողոցում գտնվող «Ֆրանսիա» հյուրանոցում, ուր այդ տարիներին (մինչեւ «Ինտուրիստ»-ը) ապրում էր նաեւ Հայաստանում վերահաստատված հայ մտավորականությունը: Ըստ Դանիել Դգնունու հուշերի՝ Չարենցը տրիոլետներ էր գրում այդ դղյակի եւ նրա մարդկանց մասին. նրա կարծիքով՝ դրանք «չեն պահպանվել նրա ժառանգության մեջ» (ԳԱԹ, ՉՖ, թիվ 221): Նրա հիշողությամբ՝ դա տրիոլետներով գրված պոեմ էր եւ ընդգրկում էր 5-6 էջ: Դիպաշարը՝ արեւելյան դղյակում ապրող դաժան արքա եւ չքնաղ թագուհի, թագուհուն անհույս սիրահարված բանաստեղծ, որ թափառում է դղյակի շուրջը: Արթուն պահակներին խաբելով՝ նաժիշտները բանաստեղծին ներս են տանում: Այդ գաղտնի տեսակցությունների մասին տեղեկանում է արքան եւ հրամայում դավաճան թագուհուն գահավիժել անդունդը: Իսկ պոետը խելագարվում ու սարերն է ընկնում: Ընդհանուր ուրվագծով այս անհայտ պոեմը նախապատրաստել է «Ասպետական» ռապսոդիայի ծնունդը:

Շարունակելի

Դավիթ ԳԱՍՊԱՐՅԱՆ

Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր

ԻՆՔՆԱԿԵՐՊԱՎՈՐՎԱԾ ՉԱՐԵՆՑԸ «ԵՐԿԻՐ ՆԱԻՐԻ» ՎԵՊՈՒՄ ԵՎ ԿԱՐՍԻ ԱՆԿՈՒՄԸ ՆՐԱ ՀԱՅԱՑՔՈՎ

Սկիզբը՝ էջ 5

Այդպիսին է Չարենցի վերաբերմունքը Կարսի պաշտպանությունը դասալքությամբ քանդող հայազգի բոլշեւիկների, «վակզալի մեյդանի բաշիբուզուկների», սրանց նպատակամղող կարո դարայանների, պարոն մարուքեների, օրիորդ սաթոների ու նրանց օտարերկրյա պարագլուխների նկատմամբ:

Պատմությունը ժամանակ առ ժամանակ կրկնվում է: Եվ որքա՜ն արդիական ու մեր օրերին համահունչ են չարենցյան շատ բնորոշումներ, որ արտահայտված են ինքնակերպավորված հեղինակի անմիջական խոսքում կամ վիպական հերոսների արարքների ու խոսքի հանդեպ նրա հեղինակային վերաբերմունքում:

Պատերազմի եւ խաղաղության խնդիր այն ժամանակներում էլ է եղել, եղել է նաեւ, այսպես կոչված, «գրավյալ տարածքների» խնդիր: Հազիվ իրականացել էր մեր ժողովրդի դարավոր իղձը, մեծ զոհերի ու ծանր կորուստների գնով վերականգնվել էր հայոց պետականությունը՝ Հայաստանի Առաջին Հանրապետությունը, որը Չարենցը մի ներքին հպարտությամբ անվանել է **Նաիրապետություն**:

Պատմաբաններն այսօր են աղաղակում, թե Կարսի անկման եւ դրանով իսկ պատմական հայրենիքի կործանման մեղավորներին պետք է մեր մեջ փնտրել: Բայց Չարենցն այդ ողջամտությունն ունեցել է վեպը գրելիս՝ 1921-24 թթ.: Զգոն ու սթափ քաղաքագետի հայացքով նա խորացել է աղետի պատճառների մեջ, եւ եթե պատմագետները միայն փաստերի լեզվով են խոսում, ապա Չարենցն այդ փաստերի վրա ստեղծել է մարդկային բնավորությունների մի ամբողջ պատկերասրահ, ընդհանրացված գեղարվեստական կերպարներ: Ընթերցողը «նաիրադավաճանների» կողքին տեսնում է նաեւ պետական մտածողությամբ օժտված իրական նաիրցիների, որ մտածում էին՝ իրենց պետությունը կարող էր գոյատեւել միայն ինքնիշխանությամբ, ինքն իրեն պաշտպանելով, հարեւանների հետ դիվանագիտական արժանապատիվ հարաբերություններ հաստատելով: «Այսպիսով, ինչպես տեսնում ենք,- գրել է Չարենցը,- ամեն ինչ փոխվել էր եւ ընդունել միանգամայն **նաիրյան կերպարանք**: **Նաիրի՛ն** էր, հին, երազյալ, հավիտենական Նաիրին, որ տարիների մուժից, մշուշից ելած՝ առել էր իրական կերպարանք,- ինչպես կասեր կենտրոնաուղեղասարդ Մազութի Համոն: - Եվ ամեն ինչ լավ էր գնում, նույնիսկ կարելի է ասել, որ **կատարյալ հանգիստ եւ խաղաղություն** կտիրեր նաիրյան այդ քաղաքում եւ շրջանում, եթե չլինեին մի շարք **ստոր, անպատկառ, նաիրադավաճան** մարդիկ, որոնք խանգարում էին նորաստեղծ նաիրապետության հանգիստը» (5, 232, ընդգծ.՝ բնագրի): Ի դեպ, հեղինակը, ասվածի կարեւորության նկատառումով, ընդգծված արտահայտությունն իրար հետեւից կրկնել է եւս մի քանի անգամ՝ այլ կարեւոր ասելիքների հետ միահյուսելով, ինչն ասելիքը բազմապատկելով ցայտունացնելու եւ առավել ընկալելի դարձնելու ո՛չ սովորական ոճական հնարանք է. «Եվ ո՞վ գիտե՝ կկատարվե՞ն արդյոք հետագա դժբախտ ու ահավոր դեպքերը, եթե չլինեին այդ **ստոր, դավաճան, անպատկառ** մարդիկ: Երեւակայո՞ւմ եք՝ դրանք՝ այդ ստոր, դավաճան, անպատկառ մարդիկ, դեմ էին «**գրավված վայրերի**» պաշտպանության, ինչ-որ խաղաղություն էին պահանջում այդ **ստոր, դավաճան, ազգուրաց** մարդիկ, երբ դեռ չէր գետնահարված **ոսոխը**. ավելին՝ երբ իր **վերջին հորդաները** հավաքած՝ թափթփուկ բանակներով պատրաստվում էր *«գրավված վայրերը»* խուժել, վերստին հրի ու սրի մատնել այնքան դժվարություններով **վերջապես ազատագրված** երկիրը Նաիրի...Հասկանո՞ւմ եք՝ **ղուշը**, ինչպես ասում էր Հաջի Օնիկ էֆենդին, երկնային թռչունը եկել, իր ոտքով մեր ձեռքն էր ընկել, իսկ այդ ստոր պարոնները պահանջում էին, որ մենք մեր ձեռքով վերցնենք ու բաց թողնենք այդ **ղուշը՝** հանուն ինչի՞, կամ ինչպես Հաջի էֆենդի Մանուկոֆն էր ասում - **անունն ի՞նչ դնենք**» (5, 233, բոլոր ընդգծ.՝ բնագրի): Այսինքն՝ հեղինակը համամիտ է իր հերոսի՝ Հաջի Մանուկոֆի խոսքին: Իսկ հանուն դեռեւս չտապալված արյունարբու Հավիտենական հիվանդի հետ խաղաղության նրան տարածքներ զիջելու բոլշեւիկյան «նաիրուրաց տխմարությունը» միայն մեկ անուն եւ չարենցյան մեկ որակում ունի միայն՝ «**Ազգային դավաճանություն**», որը բնագրում դարձյալ ընդգծված է: Տեսեք, թե չարենցյան բնորոշումը որքա՜ն է արդիական, որ կարող է նույնիսկ շփոթվել հանուն խաղաղության Ադրբեջանին ազատագրված տարածքներ զիջելու այսօրվա քարոզչության հետ:

Շարունակելի

Սամվել ՄՈՒՐԱԴՅԱՆ
Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր

ԷՋՄԻԱԾՆԻ ՏՊԱՐԱՆԸ ՈՒ ԹՂԹԻ ԳՈՐԾԱՐԱՆԸ

Սկիզբը՝ էջ 5

Սիմեոնը մի առանձին գրությամբ Գրիգոր աղային հայտնում է նաեւ թղթագործների խաբեության մասին՝ ավելացնելով, որ չնայած նրանք տեղի աշակերտներին ոչինչ չեն սովորեցրել, այնուհանդերձ վերջիններս կարողացել են ինքնուրույն ուսանել թղթագործության արվեստը եւ այժմ նրանցից լավ են թուղթ պատրաստում:

Որպես ապացույց՝ նա Գրիգորին է ուղարկում 4 թերթ թուղթ՝ 2-ը առաջին անգամ արտադրած փոքր տեսակից, 2-ն էլ հետո արտադրած մեծ տեսակից, նաեւ 2 թերթ տպած: Գործարանում պատրաստված թուղթը կրում էր հետեւալ լուսադրոշմ-տարբերանշանները. մի կողմում՝ «Էջմիածին» բառը եւ «Ս. Կ.» տառերը («Սիմեոն կաթողիկոս» բառերի սկզբնատառերը), մյուս կողմում՝ «թ. ՌՄԻԵ» (1776) եւ «Գ. Մ.» տառերը (գործարանի ծախսերը հոգացող Գրիգոր Միքայելյանի անվան սկզբնատառերը):

Գրիգոր աղան անգլերենից թարգմանել էր 5 մուրհակագիր եւ ուղարկել, որ սրբագրեն, տպեն եւ հետ ուղարկեն իրեն՝ իբրեւ նմուշ: Կաթողիկոսը, յուրաքանչյուրից 4 հատ տպել տալով, ուղարկում է նրան՝ միաժամանակ հայտնելով, որ թե՛ Տոնացույցները եւ թե՛ «Զբոսարան» գրքույկը եկեղեցիներին բաժանել են անվճար:

Սիմեոն կաթողիկոսի հիմնած տպարանում գործել է ձեռքի 2 մամուլ: Հայտնի չէ, թե դրանք երբ են գործածությունից դուրս եկել: Գուցե երբ նոր՝ կատարելագործված մեքենաներ են ստացվել, Սիմեոն հայրապետի ձեռքի մամուլները դարձել են անգործածելի եւ մատնվել անուշադրության: Հետագայում անփութության ու անհասկացողության պատճառով այդ մամուլների տախտակները տգետ մարդկանց կողմից կոտրտվել են. դրանցից մնացել են միայն 2 մեծ պտուտակները, որոնք էլ հետագայում անհետացել են: Միայն 1910 թ. Արտակ եպիսկոպոս Սմբատյանցը եւ վարպետ Ղեւոնդ Ղարախանյանը փնտրում-գտնում են դրանք եւ հանձնում հնության թանգարանին:

Տպարանն ու գործարանը Սիմեոն Վեհափառի օրոք բավական ծաղկյալ վիճակում էին: Սակայն նրա վախճանից հետո՝ Ղուկաս Կարնեցի կաթողիկոսի օրոք (1780-1799 թթ.), Արարատյան երկիրը հայտնվում է պատերազմների ճիրաններում: Տպարանը շարունակում է գործունեությունը, թղթի գործարանը, ավաղ, պարսպից դուրս մնալու պատճառով ավերվում է. ասպատակող զորքերը հափշտակում են երկաթե ու պղնձե գործիքները, ինչի հետեւանքով էլ գործարանն ամբողջովին դադարում է գոյություն ունենալուց: Հովհաննես Շահխաթունյանցը գրում է, որ դրանից հետո տպարանի ձուլված տառերը հայտնվում են տարբեր քաղաքներում: Մեր հայրենակիցները, բարեբախտաբար, գերեվարողներից գնում են ձուլածո մեսրոպյան տառերը եւ պատերազմից հետո վերադարձնում Մայր Աթոռին: Տպարանը, թեպետ զրկվել էր նախկին հզորությունից, այնուհանդերձ շարունակում էր լույս ընծայել եկեղեցական եւ այլ բնույթի գրքեր՝ ապահովելով այդ օրերի մեր հոգու հացի մի մասը:

Թե ստույգ երբ է ավերվել գործարանը, հայտնի չէ, սակայն 1784 թ. գարնանը առաջարկվում է այն վերանորոգել. նախաձեռնողը Կ. Պոլսի նվիրակ Իսահակ վարդապետն էր, ում վրա էր, հավանաբար, դրված Էջմիածնի համար թուղթ ձեռք բերելու եւ առաքելու դժվարին պարտականությունը: Նա 1784 թ. փետրվարին կաթողիկոսին գրում է, որ ինքը նպատակ ունի դրամ հավաքելու՝ թղթի գործարանը վերականգնելու համար: Սակայն Ղուկասը նրան պատասխանում է. «Իսկ վասն թղթատանն, որ ցաւելով գրես, մի՞թէ մեք ոչ ցաւիմք, այլ ժամանակս ձեռնտու չէ, մանաւանդ խղճալի Նիկողայոսն եւ վախճանեցաւ եւ նոյն արհեստին այլ գիտող ոչ գոյ, վասն որոյ թէ հետեւիլ եւս ջանասցուք, անօգուտ լինի: Ուրեմն եւ դու, սիրելիդ իմ, մի՛ աշխատ լինիր ի հետեւումն նիւթաժողովութեան, զի յարդեանս յոյժ դժուար է ձեռնարկելն, ապայն Աստուած հոգասցէ»:

Տպարանի երախայրին համարվում է Սիմեոն Երեւանցու «Գիրք աղօթից, որ կոչի Զբօսարան հոգեւոր» գրքույկը (1772 թ.), այն, բնականաբար, նաեւ հայաստանյան գրատպության առաջնեկն է: XVIII դ. լույս ընծայված գրքերից է Հովսեփոս Եբրայեցու «Յաղագս պատերազմին հրեից ընդ հռովմայեցիս»-ը (1787 թ.): XIX դ. առաջին տասնամյակներում անընդմեջ մղվող պատերազմների պատճառով տպագրվում է միայն «Սաղմոսը» (1819 թ.): 1833-1846 թթ. հրատարակվում է 18 անուն գիրք, այդ թվում՝ Հ. Շահխաթունյանցի «Ստորագրութիւն Կաթողիկէ Էջմիածնի եւ հինգ գաւառացն Արարատայ» (1842թ.), Կ. Շահնազարյանցի «Արհեստ թուաբանութեան» (1842 թ.), Ի. Կայդանովի «Հրահանգ համաշխարհական պատմութեան» (1844 թ.) եւ այլն: Էջմիածնի տպարանը նոր վերելք է ապրում Գեւորգ Դ կաթողիկոսի ժամանակ՝ 1866 թ.: «Արարատ» ամսագրի, «Ճառոց», «Ձայնագրեալ շարական», «Ձայնագրել երգեցողութիւնք սրբոց պատարագի» աշխատություններին զուգահեռ լույս են տեսնում պատմաբանասիրական, գրական երկեր՝ Աբրահամ Կրետացու «Պատմագրութիւն անցիցն իւրոց եւ Նատր-շահին պարսից» (1870 թ.), Ուխտանեսի «Պատմություն Հայոց» (1871 թ.), Ս. Շահումյանցի «Ընտիր պատմութիւն Դավիթ Բեկին եւ պատերազմացն հայոց Խափանու» (1871 թ.), Սիմեոն Երեւանցու «Ջամբռ» (1873 թ.), Աբել Մխիթարյանցի «Վաղարշապատ, քաղաքամայր Հայաստանի» (1874 թ.), Մխիթար Գոշի «Դատաստանագիրք հայոց» (1880 թ)., Առաքել Դավրիժեցու «Պատմութիւն» (1884 թ.) եւ այլն: 1895-ին Մայր Աթոռի տպարանը Պետերբուրգում մասնակցում է 1-ին համառուսաստանյան ցուցահանդեսին եւ արժանանում գովասանքի:



Շարունակությունը՝ էջ 8

ՄԱՐԻԱՄ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ՎԵՐԱՓՈԽՄԱՆ ՏՕՆԸ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿԵԱՆՔՈՒՄ

Սկիզբը՝ էջ 6

Վերափոխումից անմիջապէս առաջ Տիրամօրը ճանապարհողները բերում են նրա պատկերը եւ խնդրում. «Ընկա՛լ զպատկերս զայս նկարեալ ի Յոհաննէ եւ դի՛ր հանդէպ աստուածազարդ եւ հրաշատիպ դիմացդ եւ օրհնեա՛ զսա օրհնութիւնս հոգեւոր՝ հեղլով ի սա զշնորհս Հոգւոյն եւ տպաւորելով զզօրութիւնս աստուածային, եւ տո՛ւր զսա նշխար կենաց աշխարհի յետ Վերափոխման քո, որպէս եւ Միածինն քո զփայտ չարչարանաց իւրոց ետ նշան փրկութեան աշխարհի եւ ախոյեան յաղթող եւ անպարտելի ընդդէմ դիւացն գնդի, զի լիցի առ մեզ ի սփոփանս յետ ելիցն քոց, զի տեսանելով զսա մխիթարեսցուք, որպէս թէ զքեզ իսկ տեսանեմք, եւ ամենայն հաւատացեալք՝ որք իցեն յաղտ հիւանդութեան հոգւոյ եւ մարմնոյ՝ ի ձեռն քոյ բարեխօսութեան սովաւ գտցեն զառողջութիւն յիւրաքանչիւր վտանգից եւ մանաւանդ յԵրուսաղէմ» (46բ):

Սրբազաններն ու «ամենեցուն փրկողի կամքը կատարողները» Յիսուսի խաչի հետ են համեմատում Տիրամօր պատկերը, որ նաեւ բուժող նշանակութիւն պիտի ունենար:

«Առաքեա՛ զշնորհս ամենակարող զօրութեանդ ի փայտեղէն անօթս այս, եւ ա-ռա՛ զսա յառողջութիւն հիւանդաց, ի հալածումն դիւաց, ի բժշկութիւն ամենայն վտանգելոց հոգւով եւ մարմնով: Զի յամենեցունց առ հասարակ փառաւորեսցի անուն քո»,- խնդրում են մաքսաւորները (48ա): Տիրամայրը, սակայն, համեստօրէն հրաժարւում է, յիշեցնում, որ պատեհ չէ, իր կարողութիւնից վեր է այդ խնդրանքը կատարելը, մանաւանդ որ Աստուած նրանց տուել է «զզօրութիւնս աստուածագործ նշանաց բժշկելոյ զցաւս եւ հանելոյ զդեւս»:

Սակայն, տեղի տալով աղաչանքներին, այնուամենայնիւ, Աստուածածնին համոզում են աղօթքով դիմել Աստծուն, եւ ի կատարումն Աստուածամօր աղերսանքի՝ «ձայն լսելի եղեւ, որ ասէր. «Անարա՛տ տաճար եւ անբիծ առագաստ մարդեղութեան իմոյ, ահա՛ կատարեալ են խնդրուածք քո՝ զոր հայցեցեր: Եւ եղիցի պատկերացդ բժշկութիւն ամենայն ախտացելոց եւ ի հալածումն դիւաց՝ որք հաւատով ապաւինին ի քոյ բարեխօսութիւնդ, եւ դու եկեսջի՛ր մեծաւ փառօք ի նախապատրաստեալ հանգիստ արքայութեան՝ որ անտեսն եւ անմտանելին է եղականաց» (48ա): Աստուածամօր պատկերն օժտւում է սրբագործող յատկութեամբ ու այնուհետեւ դառնում պաշտամունքի առարկայ: «Եւ լոյս ամպեղէն ի վերուստ խաչանման կաթեաց ի պատկերն», որ եւ ստացաւ ակնկալուած զօրութիւնը (48ա): Այդպիսով սկիզբ տրուեց Աստուածամօր պատկերի պաշտամունքին:

Այնուհետեւ Սրբուհին մտնում է սենեակ, պատրաստւում Վերափոխման, ապա՝ «առաքելոցն ակումբ առեալ զմահճօքն՝ հանդերձ մաքուր կուսանօքն եւ բազմութեամբ հաւատացելովքն, ջահիւք լուցելովք եւ լապտերօք բորբոքելովք հսկէին ըզցայգն ամենայն յերգս հոգեւորս եւ պատշաճ վարկեալ սրբազանիցն խօսիլ բանս դրուատեաց ի Փոխումն Տիրամօրն եւ ի խրատ եւ յօգտութիւն ժողովրդեան» (48բ):

Եւ սկսւում է մեծ ուրախութեան տօնախմբութիւնը, Պետրոս առաքեալը ցնծագին խօսքերով դիմում է Մարիամին. «Ուրա՛խ լեր...»:

Բանաստեղծական ինքնեկ, բնահորդ ներշնչանքով գրուած դրուատն ունի, ինչպէս ասացինք, երեք կարգի շարադրանք. պարզապէս արձակ, որով գրուած են «հեղինակային նշագրումները»՝ կշռութաւոր արձակ, եւ, վերջապէս, երգային հատուածները՝ ազատ ոտանաւոր:

Հեղինակն այստեղ եւս նոյն մտահոգութիւններն ու խնդրանքներն է արտայայտում, ինչ տեսնում ենք Վայգրքի մէջ, մաղթելով աշխարհին խաղաղութիւն, «զինուորաց՝ արիութեամբ պատերազմիլ ընդդէմ հակառակաց ճշմարտութեան, դատաւորաց՝ արդարութեամբ դատել առանց ակնառութեան եւ կաշառաց...» (61ա): Անդրադարձն այս խնդիրներին նորից ու նորից դրանց՝ մտահոգիչ լինելու վկայութիւնն է: Հեղինակը ժամանակի ցաւոտ հարցերի կողքին այս անգամ չունի պատերազմական գործողութիւնների, արհաւիրքների յիշատակութիւն. սա թերեւս նշանակում է, որ իրօք սոյն երկը գրուած է կա՛մ 1149-ի մարտական գործողութիւններից շատ առաջ եւ կա՛մ բաւականաչափ ուշ:

Գրիգոր Մարաշեցին ոչ թէ պատմում, այլ ներկայացնում է իր հերոսուհու կեանքի թերեւս կարեւորագոյն հանգրուանը՝ Վերափոխումը, համաժողովրդական տօնախմբութեան շքեղ պատկերի շրջանակի մէջ: Այդ տօնականութեանը մասնակցում են նաեւ վերին ուժերը՝ առաւել ընդգծելով երեւոյթի նշանակալիութիւնը: Զուարթ տրամախօսութիւններն ինքնակայ բանաստեղծութեան հանգամանքով են դրոշմուած, իսկ համընդհանուր ցնծագին պարերը, օրհներգութիւնը կատարեալ ու ներդաշնակ են դարձնում տօնը: Այս կարգի հատուածներն անկասկած ունեցել են երաժշտական ձեւաւորում, ինչպէս տաղերգութեան շատ նմուշներ, «մեծ կտաւի» գործերը (ասենք՝ Առաքել Սիւնեցու «Ադամգիրքը»): Դրուատն ըստ էութեան թատերային ստեղծագործութիւն է, որի իրապաշտական տեսարանները կենդանութիւն են հաղորդում ամբողջ ստեղծագործութեանը: Հեղինակին օգնութեան են գալիս Հին ու Նոր Ուխտերի որոշ դրուագներ: Յատկապէս ներգործուն պիտի լինէր Երգ երգոցի պատկերային համակարգի ներառումը խմբական երգերի մէջ, երբ «Թագաւորի մայրը» եւ «տիեզերքի դժխոյն» առաջնորդւում էր «ի բարձունս»: Մարաշեցին բազմութեան ցնծալից ուրախութիւնը, շքեղ տօնախմբութիւնը պատկերում է յիրաւի մեծաշուք պարերով ու նուագերգութեամբ, հմտօրէն օգտագործելով յատկապէս Երգ երգոցը:

Ահա գեղեցիկ ես, մերձաւոր մեր,
Ահա ես գեղեցիկ. աչք քո աղաւնոյ,
Ծնօտք քո իբրեւ զտատրակի,
Պարանոց քո իբրեւ զմանեակ
Եւ որպէս շուշան ի մէջ փշոց:
Քո՛յր մեր, ի մէջ դստերաց
Նմանութիւն ոսկւոյ արասցուք քեզ՝
Հանդերձ կիտածովք արծաթոյ,
Մինչեւ Արքայ ի գիրկս իւր ընկալցի քեզ:
50բ

Ս. Գրքի այլեւայլ ներբողական հատուածների օգտագործումը միտուած է ամբողջացնելու Աստուածամօր անթերի գեղեցկութիւնը, եւ բանաստեղծը, չափաւորելու համար երկրային բարեմասնութիւնների գովքը՝ գործող անձերից մէկի բերանով անում է մի վերջին դիտարկում. «Սուտ հաճութիւն եւ ընդունայն գեղ կնոջ ո՛չ գոյ ի քեզ»,- վերստին ընդգծելով հերոսուհու եզակիութիւնը (55ա): Աստուածաշնչական տարազումով հերոսուհուն ներկայացնելու այս եղանակը շատ բնորոշ է նորագոյն ժամանակներին՝ իբրեւ ոճաւորում:

Իր հերթին Աստուածածինը Յիսուսին դիմում է իբրեւ հասարակ մահկանացուի:

Եւ հաւաքուած բազմութիւնը մեծ, խանդավառ տօնախմբութեամբ ու երկիւղով երկրպագեց՝ պատուելով պատկերը եւ ճանապարհեց Աստուածամօրը՝ միանալու «ի պարս հրեշտակապետական բանականացն» (49բ):

Նոյնպիսի ոգեւորութեամբ են ընդունում Սրբուհուն նաեւ վերին ուժերը «սիրայորդոր բաղձանօք ի պաշտօն փառատրութեան, թագազարդեալ արքայուհւոյն առաջնորդէին, ի լուսաճեմ կայանս իւրեանց ընկալեալ՝ հրճուալի տօնախնբութեամբ վերապատուէին» (52բ): Իրենց հրեղէն բերաններով վերին ուժերը ներբողում են Բանի մարմնարանին, Բարձրեալի փառքի տաճարին (53ա)՝ բարձրացնելով նրան զօրութիւնից զօրութիւն, փառքից փառք, մինչեւ ամենավերին՝ երկնից թագաւորութիւնը:

Իսկ Աստուածամայրն անհամբեր է, շտապում է վերեւ, իր Բաղձալիին հասնելու:

Միածինն Ինքը նոյնպէս գովասանական խօսքերով է դիմաւորում Իր ծնողին, եւ նրան հրաւիրում է «ի գերարփի եւ յանպատում լուսաճեմ խորանս», որ «ակն ո՛չ ետես, եւ ունկն ո՛չ լուաւ» եւ որ սկզբից եւեթ պատրաստուած էր Մարիամի համար (55ա):

Աւարտւում է Վերափոխման հանդիսաւոր արարողութիւնը, հեղինակը հարկ է համարում շարունակել. «Եւ մեք իմանալի խորանիս զաղքատիմաց բանի մերոյ **ընծայս մատուսցուք՝ ասելով...**». սրան անմիջապէս յաջորդում է [ենթա]վերնագիր, որ չի բացառում շարունակականութիւնը. «Նորին Գրիգորի ասացեալ» (թղ. 55ա) եւ ներբող է Աստուածածնին: Վերջին պարբերութիւնը, որ ընդգծել ենք, սրա հիմնաւորումն է, եւ գործ ունենք ոչ թէ նոր մի ստեղծագործութեան, այլ Գովքի վերջաբանի, ամփոփման հետ: Թերեւս իր հերթին սրան պիտի յաջորդի Նոր Զուղայի թիւ 430 Ձեռագրի պարունակածը՝ «Մաղթանք աւարտ բանի Վերափոխման Աստուածածնին» բնագիրը, որ առայժմ անծանօթ է մեզ *(Նորայր Ծովական*, Վանատուր, էջ 183): Ինչեւէ, կարելի է արձանագրել, որ Մարաշեցու սոյն երկը հայ իրականութեան մէջ մեզ հասած թերեւս առաջին ամբողջական, ինքնուրոյն «թատերային» ստեղծագործութիւնն է, որ միստերիայի բնոյթ է կրում եւ հետաքրքրական է շատ կողմերով:

Արշակ ՄԱԴՈՅԵԱՆ
Բանասիրական գիտ. դոկտոր

ԷՋՄԻԱԾՆԻ ՏՊԱՐԱՆԸ ՈՒ ԹՂԹԻ ԳՈՐԾԱՐԱՆԸ

Ակնարկի պատրաստմանն աջակցելու համար հեղինակն իր խորին շնորհակալությունն է հայտնում Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբան Շահե Ծ. վրդ. Անանյանին, Հայկ Թադեւոսյանին եւ Արամայիս սրկ. Թաքմազյանին:

Սկիզբը՝ էջ 7

1888-1889 թթ.՝ Ամենայն հայոց կաթողիկոս Մակար Ա Տեր-Պետրոսյանի օրոք (1885-1891 թթ.), կառուցվում է տպարանի նոր շենքը, որտեղ էլ մինչ օրս գտնվում է տպարանը: Շենքը սկզբում միահարկ էր. երկրորդ հարկը կառուցվում է ավելի ուշ. հարավարեւմտյան մասում կա մի անկյունքար՝ նվիրված Մակար Ա կաթողիկոսին: Տպարանը համալրվում է տառաձուլական, տպագրական նոր մեքենաներով, հարստանում տարբեր լեզուների տառատեսակներով:

XIX դ. վերջին եւ XX դ. սկզբին Էջմիածնի տպարանը լույս է ընծայում Մանուկ Աբեղյանի «Հայ ժողովրդական առասպելները Մովսես Խորենացու հայոց պատմության մեջ» (1899 թ.), «Աշխարհաբարի քերականություն» (1906 թ.), «Աշխարհաբարի շարահյուսություն» (1912 թ.), Հակոբ Մանադյանի եւ Հրաչյա Աճառյանի «Հայոց նոր վկաները» (1903 թ.), Կոմիտասի եւ Աբեղյանի «Հազար ու մի խաղ» (1905 թ). եւ այլ աշխատություններ:

Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումից ամիջապես հետո 1920 թ. դեկտեմբերի 17-ի դեկրետով Էջմիածնի տպարանը հանձնվում է Լուսժողկոմատի տնօրինությանը: 1959-1962 թթ. երջանկահիշատակ Վազգեն Ա կաթողիկոսի նախաձեռնությամբ եւ ամերիկահայ համայնքի նվիրատվությամբ տպարանի շենքն ամբողջովին վերանորոգվում է՝ համաձայն ճարտարապետ Ա. Գալիկյանի ու ինժեներ Ա. Մատինյանի նախագծի: Քանդվում եւ վերակառուցվում է երկրորդ հարկը. օգտագործվում են միագույն քարեր, որպեսզի երկրորդ հարկը ճարտարապետորեն համապատասխանի առաջին հարկին: Այդ ընթացքում տպարանը համալրվում է ժամանակակից նոր տպագրական սարքերով:

Այսօր էլ Սուրբ Էջմիածնի տպարանը, Մայր Աթոռի հրատարակչական բաժնի տնօրինությամբ, շարունակում է իր արդյունավոր գործունեությունը՝ սերունդների սեփականությունը դարձնելով հայ մշակույթի ու գիտության գոհարները, որ դարերի ընթացքում երկնել է ազգի համայնական հանճարը: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հրատարակչական բաժինը հավատացյալների համար ամեն տարի հրատարակում է բազմաթիվ գրքեր, ինչպես նաեւ կրթական գրքույկներ, որոնք նախատեսված են կիրակնօրյա դպրոցների, հայորդյաց տների, բանակային ու բանտային ծրագրերի եւ թեմերի համար: Այստեղ են տպագրվում նաեւ Մայր Աթոռի «Քրիստոնյա Հայաստան» պաշտոնական երկշաբաթաթերթը, «Էջմիածին» ամսագիրը եւ այլ պարբերականներ:

Հրաչյա ԲԱԼՈՅԱՆ (ԱՐՄԵՆՅԱՆ)
Բանասիրական գիտ. թեկնածու

ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ

Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ

Հիմնադիր՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին

Հրատարակիչ՝
«Քրիստոնյա Հայաստան» թերթի խմբագրություն

Գլխավոր խմբագիր՝
Աստղիկ Ստամբոլցյան

Գրանցման վկայական՝ 624
Խմբագրության հասցեն՝
Մայր Աթոռ Սբ Էջմիածին

Հեռախոս՝ 517197

Էլ.փոստ՝ qristhay@etchmiadzin.am
astghikstam@gmail.com

web կայք՝
krishayas.wordpress.com

Ստոր. տպագր. 4.9.2017 թ.

Տպաքանակը՝ 2100
Գինը՝ 50 դրամ